Գ Լ Ո Բ Ո Ւ Մ
Վերլուծական տեղեկագիր
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Г Л О Б У С
Аналитический бюллетень
НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

№ 2
Հունիս, 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստան – Հայություն.
զարգացման հնարավոր սցենարներ 4

Ծպտյալ հայերի թեմայի շահարկումները Թուրքիայում 7

Ստամբուլահայ համայնք. անցյալը, ներկան, խնդիրները 10

Թուրքիայի բնակչությունը և էթնիկ պատկերը 14

Հայկական համայնքային վեբկայքերը ԱՄՆ-ում 20

Качество госуправления 27

ՀԱՅԱՍՏԱՆ – ՀԱՅՈՒԹՅՈՒՆ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Հայության տարբեր հատվածների հարաբերությունները քննարկելիս երբեմն հնչեցվում են իրարամերժ մոտեցումներ։ Հայաստանը ներկայացնող քաղաքական գործիչները և փորձագետները, որպես կանոն, պնդում են, որ այդ հարաբերությունները պետք է լինեն «Հայաստանակենտրոն», իսկ Հայությունը պետք է կենտրոնանա Հայրենիքում։ Այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցներն արտահայտվում են ավելի զուսպ. նշում են Սփյուռքի առանձնահատկությունները և ակնարկում Հայաստանի ներկա, ոչ այնքան բարվոք իրավիճակի մասին։

Կողմնորոշումների նման տարբերությունը, թերևս, ավելի շուտ պայմանավորված է Հայության տարբեր հատվածների ներկայացուցիչների հոգեկերտվածքային տարբերություններով, քան իրատեսական, փորձագիտական մոտեցումներով։ Նկատենք, որ ընդհանրապես Հայության քաղաքականության վերաբերյալ դեռևս բացայակում են համալիր ռազմավարական և հայեցակարգային մոտեցումները։ Խնդրին սակավ են անդրադառնում նաև մասնավոր հետազոտություններում։ Սակայն վերջերս քաղաքական և վերլուծաբանական հանրությունում որոշակի տարածում են գտնում գաղափարներն այն մասին, որ տեղեկատվական-ցանցակենտրոն *(ՏՑ)* համակարգը Հայության քաղաքական կազմակերպման համար ամենաարդյունավետն է, և նման մոտեցման հետ դժվար է չհամաձայնել *(տե՛ս, մասնավորապես, Հանրապետական, #4)*։ Միևնույն ժամանակ, եթե որպես կազմակերպչական հենք ընդունվում է *ՏՑ* համակարգը, ապա Հայության այս կամ այն հատվածի դերակատարման խնդիրը չպետք է հակասի այդ համակարգի սկզբունքներին։

Հիշենք, որ ներկայումս ամենակատարյալ համարվող *ՏՑ* համակարգում կազմակերպման ենթակա միավորները, լինելով սփռված, ունեն ***միասնական ղեկավարություն և նպատակներ***, գտնվում են ***միասնական տեղեկատվական դաշտում՝ ցանցում*** ու, միևնույն ժամանակ, ***տիրապետում են ինքնուրույն գործելու բարձր կարողությունների***։ Ինչպես տեսնում ենք, *ՏՑ* համակարգի կիրառումը ենթադրում է որոշակի գաղափարախոսական (նպատակների համատեքստում), կազմակերպչական և տեղեկատվական նախապայմաններ։ Միևնույն ժամանակ, *ՏՑ* համակարգի առավելություններից է ճկունությունը. այն կարող է ընդունել տարբեր մոդիֆիկացիաներ՝ կախված Հայության տարբեր հատվածներում տիրող իրավիճակից և տվյալ ժամանակահատվածի համար ընտրված նպատակներից։

Հարցերի վերոնշյալ համախումբը խիստ ծավալուն է, և դրա իրատեսական քննարկումը պահանջում է սպառիչ տեղեկատվություն Հայության տարբեր հատվածների վերաբերյալ։ Նկատենք նաև, որ *ՏՑ* համակարգում իրենց տեղն ունեն ոչ միայն Հայության ավանդական կառույցները՝ համայնքները, այլև հայկական կամ հայերի մասնակցությամբ գործող տարաբնույթ, այդ թվում՝ անդրազգային կազմակերպությունները և հաստատությունները, որոնց դերակատարումն այսօր աճում է։ Հաշվի առնելով նշված իրողությունները՝ փորձենք քննարկել Հայության *ՏՑ* համակարգի ընդամենը մի քանի հնարավոր տարբերակները, որոնք կապված են Հայաստանին տեսականորեն սպասող որոշ սցենարների հետ։ Մասնավորապես, սխեմատիկորեն դիտարկենք, ի թիվս բազմաթիվ այլ տեսական տարբերակների, հետևյալ երկու ծայրահեղ և մեկ միջանկյալ սցենարները։

«Վիրտուալ Հայաստան». Այս ծայրահեղ բնույթի սցենարի էությունը հետևյալն է. որոշակի ռազմաքաղաքական զարգացումների արդյունքում ներկայիս Հայաստանը (ՀՀ և ԼՂՀ) հայաթափվում և վերածվում է վերացական, վիրտուալ գաղափար-հասկացության (մոտավորապես այն կարգի, ինչպիսին է Հայության համար ներկայիս Արևմտյան Հայաստանը)։ Դա հնարավոր է, մասնավորապես, հետևյալ զարգացումների պարագայում.

1. ***Միջուկային-էկոլոգիական աղետ.*** Իրան–ԱՄՆ, Իսրայել հակամարտությունը հանգեցնում է տարածաշրջանային միջուկային պատերազմի, որի հետևանքով Իրանի հարևան Հայաստանը ենթարկվում է էկոլոգիական աղետի: Միջուկային պատերազմների հետևանքների գիտական կանխատեսումները 60-ամյա պատմություն ունեն, սակայն ներկայացնենք դրանցից ամենավերջինը: Համաձայն Կոլորադոյի համալսարանում (ԱՄՆ) կատարված հետազոտության, լոկալ հակամարտությունում 50 ատոմային ռումբ (որոնց հզորությունը չի գերազանցում Հիրոսիմայի վրա նետվածին) օգտագործելու դեպքում, մասնավորապես, կգոյանա օզոնային խոռոչ, որի հետևանքով կզոհվի 50 մլն մարդ, այսինքն՝ մոտ այնքան, որքան 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ[1]: Կարելի է ենթադրել, որ նման աղետի հետևանքով բնակվելը ներկայիս Հայաստանի տարածքում դառնում է աննպատակահարմար:
2. ***Ռազմական-քաղաքական աղետ.*** Որոշակի աշխարհաքաղաքական ցնցումների և ռազմաքաղաքական զարգացումների արդյունքում ՀՀ-ն և ԼՂՀ-ն ենթարկվում են Թուրքիայի և Ադրբեջանի լայնամասշտաբ ինտերվենցիային ու երկարաժամկետ օկուպացիային:
3. ***Հետևանքները.*** Սցենարներից որևէ մեկի իրագործման արդյունքում դադարում են գործել հայկական պետությունները, իսկ Հայաստանի ներկայիս տարածքը հայաթափվում է: Նման պարագայում, թերևս, տեղի կունենա Հայության վերատեղաբաշխում այլ երկրներում, իսկ Հայաստանն ինչ-որ ժամանակահատվածում կվերածվի անմարդաբանակ, ***վիրտուալ*** Հայրենիքի գաղափարի:

Նկատենք, որ ներկայացված, գուցեն անհավանական թվացող, սակայն տեսականորեն հնարավոր սցենարները Հայաստանի անվտանգության դեմ ուղղված հիմնական սպառնալիքներից ընդամենը մի քանիսն են: Նման զարգացման պարագայում Հայության գոյատևման և կազմակերպման խնդիրները հնարավոր է իրագործել բացառապես ***ՏՅ*** համակարգի ձևավորման միջոցով: Ստեղծված պայմաններում համակարգի կենսունակությունը գործնականում կարող է երաշխավորված լինել, թերևս, այն դեպքում, երբ զուգահեռ գործեն մի քանի տեղեկատվական կառավարման կենտրոններ, որոնցից որևէ մեկը չունի գերակայող կարգավիճակ: Այդ կենտրոնները պետք է ղեկավարվեն Հայության անվտանգության հայեցակարգը ներկայացնող միասնական ազգային գաղափարախոսական հիմնադրույթներով: Գործունեության արդյունավետությունն ապահովելու համար համակարգի այդ կենտրոնները, ցանկալի է՝ ընդհանրապես բոլոր բաղադրիչները, պետք է ձգտեն մշտապես փոխհամագործակցել միմյանց հետ, այդպիսով ձգտելով ապահովել *դրական հետադարձ* (այլ խոսքերով՝ միմյանց ուժեղացնող) *կապը* համակարգի տարրերի միջև: Նման փոխհամագործակցություն և փոխազդեցություն ապահովող համակարգերն ընդունված է անվանել *ոչ գծային*:

«Հզոր Հայաստան». Այս մյուս ծայրահեղ սցենարը ենթադրում է հետևյալ զարգացումները. աշխարհաքաղաքական ցնցումների և զարգացումների հետևանքով Հայաստանը վերականգնում է իր տարածքային ամբողջականությունը, իսկ Հայությունը կենտրոնանում է այդ նոր ու հզոր պետությունում: Դա հնարավոր է, մասնավորապես, հետևյալ իրադրությունում.

1. Թուրքիան ներգրավվում է լայնամասշտաբ պատերազմի մեջ իր հարևաններից մեկի կամ մի քանիսի հետ միաժամանակ (օրինակ՝ Իրաքի, Հայաստանի և Հունաստանի հետ):
2. Թուրքիայի համար պատերազմի անհաջող ընթացքը հանգեցնում է միջէթնիկական կռիվների սաստկացման. քրդերի կողմից արդեն իսկ վարվող պայքարին միանում են նաև այլ ազգային փոքրամասնություններ՝ հայերը, հույները և այլք, այսինքն՝ այսպես կոչված «ինքնության ճգնաժամը» տեղափոխվում է գործնական ռազմական-քաղաքական հարթություն:
3. Վերոնշյալ գործընթացները սրում են հարաբերությունները ներթուրքական տարբեր

[1]«Ученые описали катастрофические последствия локальной ядерной войны». http://lenta.ru/news/2008.04.08/nuclear/_Printed.htm
Այս առիթով նկատենք նաև, որ մասնակի միջուկային-էկոլոգիական աղետի կարող է հանգեցնել նաև տեխնոլոգիական վթարը Մեծամորի ***ԱԷԿ***–ում:

քաղաքական կողմնորոշումներ ունեցող խմբավորումների միջև և, ի վերջո, բերում քաղաքացիական բախումների։ Պետության և հանրության ճգնաժամն ընդունում է քաոսային և անվերահսկելի բնույթ։

4. Հայաստանը և Հայությունը (գուցեև այլ շահագրգիռ տերությունները) օգտվում են Թուրքիայում ստեղծված իրադրությունից, նպաստում այդ երկրի մասնատմանը և կարողանում զգալի չափով վերականգնել Հայաստանի տարածքային ամբողջականությունը։ Որպես հաջորդ քայլ իրականացվում է Հայության կենտրոնացումը պատմական տարածքների մի մասում. այդպիսով ձևավորվում է Հայկական հզոր պետություն։

Սակայն անգամ ***Հզոր Հայաստանը***, որտեղ կարող է բնակվել Հայության գերակշռող մասը, պետք է ձգտի ունենալ զարգացած երկրներում սակավաթիվ, բայց կարող համայնքներ։ Այսինքն, անգամ եթե Հայաստանը վերածվում է ***Հայության գերակայող կենտրոնի***, միևնույն է, պետք է ձգտել պահպանել սփռված Հայության ավանդական դարձած ռեսուրսները՝ դրանց հաղորդելով յուրահատուկ դեսպանությունների կարգավիճակ։ Այս տարբերակում պետք է ձևավորել Հայության կազմակերպման հայաստանակենտրոն դասական ***ՏՅ*** համակարգ, երբ կառավարումը գլխավորապես իրագործվում է մեկ կենտրոնից։

«Զարգացած Հայաստան». Այս սցենարը ենթադրում է հայեցակարգային, բայց գծային զարգացման արդյունքում ձևավորված Հայաստան մարտավարական ապագայում։ Նման պարագայում ենթադրվում են հետևյալ իրողությունները.

1. Հայաստանը Հայության, պետական ռեսուրսների և դաշնակից-գործընկեր երկրների աջակցությամբ ձեռք է բերել ռազմական անվտանգության երաշխիքներ, հնարավորինս ինտեգրվել է համաշխարհային տնտեսությանը, սկսել է ազատագրված տարածքների վերաբնակեցման գործընթացը։
2. ***Զարգացած Հայաստանը*** դառնում է խիստ գրավիչ Հայության համար, Հայաստան-Հայություն հարաբերություններն ընդունում են համակարգված բնույթ, սկսում է ձևավորվել Հայության միասնական տեղեկատվական դաշտը։

Այս զարգացումներն ամենաիրատեսականն են և, թերևս, անգամ՝ պարտադրված, քանի որ *ոչ զարգացած Հայաստանի պարագայում Հայության կազմակերպման **ՏՅ** համակարգի ձևավորումը կապված է անհամեմատ մեծ բարդությունների հետ։*

Կասկած չի հարուցում, որ ***Զարգացած Հայաստանը,*** տիրապետելով ազգային *կազմակերպչական* ռեսուրսների մի գերակշռող մասին, կներկայացնի Հայության ամենակազմակերպված հատվածը։ Արդյունքում՝ նման պետությունը ***ՏՅ*** համակարգում ձեռք կբերի կարևորագույն դերակատարում։ Միևնույն ժամանակ, ազգային *տեխնոլոգիական և նյութական* ռեսուրսների մի զգալի մասը գտնվում է այլ քաղաքակրթական գոտիներում և երկրներում բնակվող Հայության, ինչպես նաև այլ կազմակերպչական ձևաչափերում գործող հայերի ձեռքում. այսինքն՝ Հայության այդ հատվածները նույնպես կարող են առաջատար դեր կատարել Հայության ***ՏՅ*** համակարգում։

Այսպիսով, ***Զարգացած Հայաստանի*** առկայության դեպքում տեղեկատվական կազմակերպման տեսանկյունից Հայությունը հայտնվում է նախորդ երկու սցենարների համեմատ միջանկյալ վիճակում։ Նման միջանկյալ համակարգն իր մեջ պետք է համատեղի և՛ *ոչ գծային (սփռված)*, և՛ *դասական (Հայաստանակենտրոն)* ***ՏՅ*** հայեցակարգերը։

Գագիկ Տեր–Հարությունյան

ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱՅԻ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայում բնակվող ծպտյալ և իսլամացված հայերի հարցը ժամանակ առ ժամանակ հայտնվում է թուրքական մամուլի, քաղաքական, գիտական շրջանակների օրակարգում և պատճառ դառնում տարատեսակ շահարկումների: Նույնիսկ մակերեսային դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ շահարկումների քաղաքականությունն աճելու և էլ ավելի ծայրահեղ դառնալու միտում ունի:

Ընդհանրապես, հայկական թեմատիկան նուրբ և զգայուն հարց է Թուրքիայում, վերջին տարիներին դրան է ավելացել նաև ծպտյալ ու իսլամացված հայերի թեման, ինչը թուրքական քարոզչամեքենային կեղծիքի նոր ալիք բարձրացնելու հնարավորություն է տվել: Թուրքական մամուլը, տարբեր վերլուծաբաններ, գիտնականներ վերջին մեկ ամսվա ընթացքում կրկին անդրադարձան ծպտյալ հայերի թեմային՝ օգտագործելով արդեն ավանդական շահարկման գործիքները, որոնք, կարելի է ասել, արդեն հնացել կամ գոնե գտնվում են այդ ճանապարհին: Միգուցե նաև այդ է պատճառը, որ թուրքական քարոզչամեքենան, ձգտելով նորության, ավելի է խեղաթյուրում փաստերը և անտրամաբանական տարբերակներ հրապարակ նետում:

Թուրքական *Aktif Haber* թերթի լրագրող Յուսուֆ Գեզգինը մեկն է նրանցից, ով ակտիվորեն զբաղվում է Թուրքիայի այլակրոնների և հատկապես ծպտյալների խնդրով: Նրա հոդվածներն աչքի են ընկնում ծայրահեղական, կողմնակալ, ոչ օբյեկտիվ մոտեցումներով: Յուսուֆ Գեզգինը, թեմային վերաբերող իր վերջին հոդվածում (18 ապրիլի) զարկ տալով, ըստ երևույթին, երևակայությանը, անդրադարձել է ծպտյալ հայերի մեջ իբրև թե գոյություն ունեցող երկու խմբերի խնդրին՝ հոդվածը վերնագրելով *«Ծպտյալ հայերը հայերի դեմ»:* Ըստ նրա, Թուրքիայում 35-50 հազար հաշվվող հայկական համայնքից բացի, որոնք քրիստոնյա են և պաշտոնապես ճանաչված են որպես փոքրամասնություն, կան որպես մուսուլման ներկայացող ծպտյալ հայեր, որոնց թիվը, ըստ տարբեր աղբյուրների, 1 միլիոն է: *«1915-ի դեպքերից հետո Անատոլիայում մնացած այս հայերի մեծ մասը՝ ամենաքիչը կեսը, թուրքերի կամ քրդերի մեջ շարունակում են ապրել որպես իսկական մուսուլմաններ: Եթե նույնիսկ գիտեն էլ իրենց նախկին ինքնության մասին, ապա, միևնույն է, նպատակ չունեն վերադառնալ դրան: Սակայն Եվրոպայից ֆինանսավորվող որոշ կազմակերպություններ ցանկանում են այս հատվածի կրթված երիտասարդներին հիշեցնել իրենց հայկական արմատները: Այս մեկ միլիոնի զգալի մասը, իմանալով և գիտակցելով իր հայկական ինքնությունը, ներկայանում է որպես թուրք կամ քուրդ: Այս մասը մի կողմից՝ քուրդ և քուրդիստ ինքնությամբ PKK-ի և նրա քաղաքական կազմակերպության ամենաառջևում է տեղ զբաղեցնում, մյուս կողմից՝ ազգային, նույնիսկ ազգայնական ինքնությամբ ամենառասիստ թուրքիստների շարքերում է տեղ գտնում: Սակայն ամենաազդեցիկ տեղը, որ զբաղեցնում են այս կրիպտո-հայերը, քաղաքացիական և զինվորական բյուրոկրատիան է: Քրդերի, թուրքերի, ալևիների մեջ տեղ զբաղեցնող ծպտյալ հայերը բյուրոկրատիայի կարևոր կետերում բավական ազդեցիկ են: Դատական, ռազմական համակարգերում և համալսարաններում մեծ թվով ծպտյալ հայեր կան, և համալսարաններում գտնվողները տեղ-տեղ բացահայտվում են: Սակայն բանակի և դատական համակարգի մեջ եղածների անունները ոչ ոք համարձակություն չի ունենում արտասանել»:*

Ըստ Յուսուֆ Գեզգինի՝ Թուրքիայի ծպտյալ հայերը բաժանվում են երկու խմբի. առաջինը նրանք են, ովքեր ցանկանում են ծպտյալ մնալով շարունակել իբրև թե թուրքական պետության ներսում իրենց ունեցած ազդեցությունը, և երկրորդը՝ նրանք, ովքեր ցանկանում են արձանագրել ծպտյալ հայերին և այդպիսով ստեղծել ուժեղ հայկական ներկայություն: Եվ իբրև թե ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջև լուրջ պայքար է ընթանում: *«Ծպտյալ հայերի իրական ինքնությունը բացահայտելու և հայկական գաղութ ստեղծելու քաղաքականությունը պաշտպանվում է հայկական սփյուռքի կողմից, որը հավատում է հայկական ծագմամբ*

մարդկանց արմատներին վերադարձնելու անհրաժեշտությանը: Ամերիկացի, եվրոպացի հետազոտողների, զբոսաշրջիկների, լրագրողների անվան տակ ուղևորություններ են կազմակերպվում այն վայրեր, որտեղ բնակվում են հայկական ծագմամբ քաղաքացիները, այստեղի հայկական ինքնությունն ավելի ամրապնդելու, կազմակերպելու ուղղությամբ աշխատանքներ են կատարում: Եվրամիության ֆոնդերից օգտվելով՝ Անատոլիայի հայկական հուշարձանների վերականգնման համար ջանքեր են գործադրվում: Հայկական մշակույթը վերակենդանացնելու խնդրում պետության մեջ տեղ գտած ծպտյալ հայերն էլ լուրջ աջակցություն են ցույց տալիս: Ես կարծում եմ, որ Եվրատեսիլների ժամանակ Թուրքիայից Հայաստանին տրված բարձր միավորները հայկական ներկայությունն ապացուցելուն միտված ատրակցիոն են: Իսկ մյուս խումբը կողմ չէ բացությանը և կարծում է, որ իր ուժը գաղտնի լինելու մեջ է: Այս խումբը հավատում է, որ ծպտյալ հայերին պետության, PKK-ի, ազգայնականների մեջ ներդնելով՝ կկարողանա ավելի հեշտ ներսից ծնկի բերել, մասնատել թուրքական հասարակությունը, պետությունը: Այս խումբն անհանգստանում է, որ բաց քաղաքականությամբ կգաղտնազերծվեն այն դիրքերը, որ նրանք ձեռք են բերել երկար տարիների աշխատանքով: Նրանք կարծում են, որ ծպտյալ մնալն ավելի ազդեցիկ և ձեռնտու է, իրենց նպատակին հասնելու և թուրքերից վրեժ լուծելու համար ավելի հարմար մեթոդ է: Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացն սկսելու հետ մեկտեղ ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջև լուրջ պայքար է սկսվել»: Հոդվածագիրն ավելի հեռուն է գնում և նույնիսկ Հրանտ Դինքի սպանությունը վերագրում ծպտյալ հայերին. *«Ես այնքան էլ անհավանական չեմ համարում նաև այն, որ Հրանտ Դինքին, որը կողմ էր բաց լինելուն և խոսում էր ծպտյալ հայերի գոյության մասին, սպանել են ազգայնականների մեջ ներդրված ծպտյալ հայերը»:*

Ըստ Գեզգինի՝ բաց քաղաքականություն վարող և հայկական ինքնություն ի հայտ հանել ձգտող խումբը՝ ի տարբերություն մյուս խմբի, ավելի «մաքուր, անմեղ է»: Նրա կարծիքով՝ ինքաբացահայտվող ծպտյալ հայերն անհամեմատ ավելի քիչ վնաս կարող են պատճառել Թուրքիային: Հոդվածագիրն ավելի է բացում քարտերը և վերլուծում այն հնարավոր զարգացումները, որոնց կարող են հանգեցնել ծպտյալ հայերի ինքնաբացահայտումը և վերադարձը արմատներին: *«Անատոլիայում մի ժամանակ բնակչության մոտավորապես մեկ չորրորդը հայերն են կազմել, շատ լավ բարեկամություն, հարևանություն են արել, և նույնիսկ համարվել են «հավատարիմ ազգ»: Այսօր եթե բոլորն էլ իրենց արմատներին վերադառնան, չեմ կարծում, թե Թուրքիայի բնակչության հազիվ 1 տոկոսը[1] գերազանցող հայ բնակչությունը երկրի համար պրոբլեմ կլինի: Սակայն ծպտյալ հայերն արդեն մեկ դար է՝ ոչ հայերին, ոչ էլ թուրքերին հանգիստ չեն տալիս»:*

Վերջում Գեզգինն անդրադառնում է թուրքական այն հայտնի թեզին, թե ծպտյալ հայերը ներդրված են ամենուր, և նրանցից մեծ վտանգ է սպառնում: *«Այս երկրում ծպտյալ հայերը մեր մեջ են այն աստիճան, որ կարող են լինել թուրքական ազգայնականության ղեկավար, Շվեցարիայում՝ Լոզանում հայկական թեզերին թուրքական կողմի անունից պատասխան տվող[2], ազգայնական ցույցերին ամենաառջևում թուրքական դրոշը թափահարող»:*

Վերջերս տխրահռչակ պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուն, խոսելով Բոստոնի Հայ հեղափոխական դաշնակցության իբր թե փակ արխիվի մասին, նորից հայտարարեց, որ *«1915-ի աքսորի ժամանակ մոտ 90-95 հազար հայ երեխա և կին ապաստան են գտել մուսուլման ընտանիքների մոտ և ժամանակի ընթացքում իսլամացել: Սրանք փոխում են անունները և իրենց գոյությունն այդպես շարունակում: Սակայն 1970-ականների կեսերին այս մարդիկ անունները փոխելով՝ կրկին սկսեցին հայկական անուններ ընդունել: Անատոլիայում բոլորը գիտեն, թե ով է հայ: Հրանտ Դինքն ասում էր, որ սրանց թիվը շուրջ 500 հազար է»:*

Իսկ այս խնդրով զբաղվող մեկ այլ լրագրող՝ Մեհմեթ Շնքեթ Էյգին (Milli gazete, 26.05.2008) նշում է, որ այս խնդրի շուրջ պետք է զգույշ գրել և խոսել: Ըստ նրա՝ ծպտյալ հայերից պետք է տարանջատել բացահայտ հայերին, որոնք Թուրքիայում ապրում են որպես փոքրամասնություն: *«Ճիշտ չէ մեղադրել ծպտյալ հայերի մեծամասնությանը (լինեն 500 հա-*

---

[1] Հիշեցնենք, որ ըստ վերջին մարդահամարի՝ Թուրքիայի բնակչությունը կազմում է 70 586 256 մարդ:

[2] Այստեղ Գեզգինը, ըստ երևույթին, նկատի ունի Թուրքիայի Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքին, որը Շվեյցարիայում դատապարտվել է Հայոց ցեղասպանությունը մերժելու համար:

զար կամ էլ 1.5 միլիոն): Նրանց մեծ մասը, իմ կարծիքով, իսկապես մուսուլման է դարձել: Սակայն փաստ է, որ այս կրիպտո-հայերի մեջ կան մարդիկ, որոնք վնաս են տալիս Թուրքիային»: Այնուհետև նա ևս, շարունակելով բազմիցս հնչած կարծիքը, թե Թուրքիայում տեղի ունեցած գրեթե բոլոր բացասական երևույթների համար մեղավոր են հայերը՝ լինեն բացահայտ թե ծպտյալ, նշում է. *«1960թ. մայիսի 27-ի հեղաշրջման մեջ նրանք (ծպտյալ հայերը) մեծ դեր են ունեցել: PKK-ի շարժումն իրականում ոչ թե քրդական, այլ հայկական շարժում է: Վերջին 60 տարվա ընթացքում բոլոր ահաբեկչությունների, հեղաշրջումների, խռովությունների, հուզումների, բռնությունների մեջ դեր են ունեցել կրիպտո-հայերը: Կրկին հայկական փոքրամասնության անդամ իմ քաղաքացիներին առանձնացնելով՝ ասում եմ. այսօր իսլամի, մուսուլմանների, Ղուրանի, սրբության դեմ ամենակատաղի հարձակվողներն արտաքուստ թուրք և մուսուլման երևացող կրիպտոներն են»:*

Թուրքիայում հայերի թեմայի շահարկումն այն աստիճանի է հասել, որ վերջերս հոդվածով հանդես եկավ անսահման թուրքասեր, պոլսահայ լրագրող Լևոն Փանոս Դաբաղյանը *Once Vatan* (6,06,08) թերթում: Այսպես, նույնիսկ ծայրահեղ թուրքաֆիլ «հայը»՝ անդրադառնալով վերոհիշյալ հեղինակներին, հարց էր տալիս, թե եթե հայերը չլինեին, ինչով պետք է զբաղվեին ոմանք, նրանց համար ինչը պետք է լիներ գրելու նյութ և այդպիսով նաև ապրուստ հոգալու միջոց: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցին՝ ասելով, որ այդ դեպքում այդ լրագրողների համար նյութ ուղղակի չէր լինի: Նա անդրադարձել է նաև հայերի իսլամ ընդունելու խնդրին՝ նշելով, որ հայերի իսլամացումը ոչ թե 1915-ի, իր ձևակերպմամբ՝ աքսորի ժամանակ, այլ թուրքերի և հայերի առաջին շփման ժամանակ է սկսվել, որը շարունակվել է նաև օսմանյան շրջանում: Իսկ խոսելով ցեղասպանության ժամանակ իսլամ ընդունած հայերի մասին՝ նա մեջբերում է այդ տարիներին արձակված հրամանը, որով թուրք ոստիկանները շրջում էին մուսուլմանների տները և պահանջում հանձնել իրենց մոտ ապաստան գտած հայերին: Այդ հրամանում հետագայում ավելացվել է, որ եթե հայերը նույնիսկ իսլամ էլ են ընդունել, ապա, միևնույն է, պետք է հանձնել նրանց: *«Եվ այսքանից հետո փրկվածներին այսօր PKK-ական համարելը, պիտակ կպցնելը որքանո՞վ է պատվաբեր»:*

Այս բոլոր շահարկումները, մեր կարծիքով, տեղավորվում են ավելի լայն հասկացողության մեջ. հանրապետական Թուրքիայում հայերը միշտ էլ ներկայացվել են որպես դավաճան, «5-րդ շարասյուն», և այս ամենը կատարվել է պետական ամենաբարձր մակարդակով: Այս նույն համատեքստում կարելի է տեղավորել Թուրքիայում ներքին թշնամի ունենալու անհրաժեշտությունը, իսկ թշնամու ամենահարմար «թեկնածուն» հայերն են: Անդրադառնալով այս խնդրին՝ թուրք հայտնի լրագրող Էջե Թեմելքուրանը հարց է տալիս, թե ինչ են անելու թուրքերը, երբ բոլոր հայերը լքեն երկիրը, այդ դեպքում ում են հռչակելու թշնամի: Նրա կարծիքով՝ այդ ժամանակ թուրքերը սկսելու են միմյանց մեղադրել ավելի քիչ թուրք լինելու մեջ և իրար թշնամի են հայտարարելու:

Ռուբեն Մելքոնյան
«Նորավանք» հիմնադրամ

ՍՏԱՄԲՈՒԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ.
ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ
(պատմական ակնարկ)

Ե՞րբ են հայերն առաջին անգամ հայտնվել բյուզանդական հողի վրա և մասնավորապես այն մեծ քաղաքում, որը դարերի ընթացքում, անցնելով ձեռքից ձեռք, փոխել է նաև իր անունը, որոնցից ամենահայտնիներն են եղել երեքը՝ Բյուզանդիոն, Կոնստանդնուպոլիս, այժմ էլ՝ Ստամբուլ: Իրականում Ստամբուլ անունն էլ Կոնստանդնուպոլիս անվան կրճատումն է. դեռևս հունական ժամանակաշրջանում վերածվեց «Ստանպոլի»-ի, այնուհետև թուրքերի մոտ ստացավ Ըստանբուլ կամ Իստանբուլ ձևը:

Երկար ժամանակ լինելով «քաղաք-պետություն»՝ այն սփռվել է մի հսկայական տարածության վրա: Ցամաքային և ծովային ռազմավարական խաչմերուկների հանգույցում գտնվող Ստամբուլում զարգանում էր առևտուրը, ծաղկում էին արհեստները և աճող բուրժուազիայի հետ համընթաց՝ նաև արվեստը:

Զարմանալի չէ, որ տարբեր տերություններ ցանկանում էին նվաճել քաղաքը զենքով, ոմանք էլ նախընտրում էին տնտեսական միջոցները: Այսպես, օրինակ, 14-րդ դարում ջենովացիները, չկարողանալով հիմնվել բուն քաղաքում, քանի որ օրենքները թույլ չէին տալիս օտարներին ազատ բնակություն հաստատել, քաղաքից դուրս, Ոսկեղջյուր ծովածոցի հանդիպակաց մասում հիմնեցին իրենց թաղը (այն այսօր կոչվում է Գալատա) ու պարսպապատեցին այն: Գալատա թաղում գտնվում էր պոլսահայ մի եկեղեցի, որը կառուցվել էր 1799թ. և պահպանվել մինչև մեր օրերը: Երեք խորան ունեցող (իր փառքի շրջանում միաժամանակ երեք խորանի վրա պատարագ էր մատուցվում) այս եկեղեցին քանդվեց (հանրապետության օրոք) պետության կողմից՝ ճանապարհաշինության պատրվակով: Եկեղեցին քանդելուց հետո տարածքի մեծ մասի վրայով ճանապարհ կառուցվեց: Հայ համայնքին իրավունք տրվեց ճանապարհաշինությունից զերծ մնացած տարածքում կանգնեցնել մի նոր եկեղեցի: Այսօր դա Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Բազմաթիվ հիշատակություններ կան հայկական եկեղեցիների, անգամ վանքերի մասին, որոնք գործել են Բյուզանդիայի մայրաքաղաքում:

Հայերը սկսեցին այստեղ ներգաղթել հավանաբար 384 թվականից, իսկ հայկական համայնքը կազմավորվել է 572թ.: 9-11-րդ դարերում զգալիորեն ավելանում է հայերի թիվը. դա այն ժամանակաշրջանն էր, երբ գահակալում էր ծագումով հայկական Մակեդոնացի տոհմը. Բյուզանդիայի պատմության մեջ այդ ժամանակահատվածը մտավ որպես «ոսկե դար»: Բյուզանդիայի հայերը առևտրականներ էին, արհեստավորներ, ճարտարապետներ ու բյուզանդական զորքի կարևոր մաս կազմող հայկական լեգեոնների զինվորներ ու բազմաթիվ զորավարներ, որոնցից ոմանք դարձել էին Բյուզանդիայի կայսրեր. ամենաճանաչվածներից են եղել Լևոն V-ը, Ռոմանոս I-ը, Նիկեփորոս II Փոկասը, Հովհաննես I Չմշկիկը և Վասիլ II Բուլղարասպանը:

Պետք է առանձնացնել հունադավան հայկական համայնքը, որն առաջացել էր մասնավորապես հայերի վրա ժամանակ առ ժամանակ գործադրվող կրոնական ճնշումների և հալածանքների հետևանքով: Հունադավան հայերին կոչում էին «հայ-հոռոմներ»:

Բյուզանդական եկեղեցին ունեցել է նաև հայազգի պատրիարքներ: Հայազգի կայսրերի, պատրիարքների, զորավարների, գիտնականների ու հարուստ վաճառականների շնորհիվ բյուզանդական իրականության մեջ թափանցել են նաև հայկական ճարտարապետությունն ու կերպարվեստը, որոնք մեծ հետք են թողել բյուզանդական մշակույթում:

Այսպիսով, հայերի առաջին զանգվածային ներգաղթը Կոնստանդնուպոլիս սկիզբ առավ 4-րդ դարում: Հաստատ է, որ կայսր Միխայել IX Պալեոլոգոսի ամուսնությունը Կիլիկիո հայոց թագավոր Հեթումի քրոջ՝ Ռիտայի հետ 1296թ. ուժեղացրեց հայերի դիրքը Բյուզանդիայում, և այն հայերը, որոնք լքել էին երկիրը տարբեր ժամանակներում կատարված կրոնական բնույթի հալածանքների ու վտարումների պատճառով, վերադարձան Կոնստանդնուպոլիս:

Հետագայում ևս տեղի է ունեցել մեծ հոսք դեպի Կոնստանդնուպոլիս. հիշատակման արժանի է 1453թ., երբ օսմանյան Մեհմեթ II սուլթանը գրավեց Կոնստանդնուպոլիսը, և արդեն սուլթանի կամքով բազմահազար հայեր բնակեցվեցին քաղաքի ստրատեգիական վայրեր հանդիսացող դարպասների մոտ՝ որպես հակակշիռ տեղի հույն բնակչությանը, որը լավ չէր տրամադրված զավթիչների հանդեպ։

1475թ. օսմանցիները գրավեցին Ղրիմը և այնտեղից էլ 40 հազար հայ տեղափոխեցին Կոնստանդնուպոլիս։ Համաձայն 1478թ. մի արձանագրության՝ քաղաքում (պարիսպներից ներս) ապրում էին 1860, իսկ Գալատայում՝ 310 հայեր։ Այդ թիվն արտահայտում է միայն պարիսպներից ներս բնակվող հայերի (այն էլ միայն չափահաս տղամարդկանց) քանակը։

1514թ. Թավրիզի գրավումից հետո, ինչպես նաև 1577-ին՝ Նախիջևանի և դարձյալ Թավրիզի գրավումներից հետո, այնուհետև 1605-ին Կովկասից մեծ քանակությամբ հայեր գաղթեցին Կոնստանդնուպոլիս։

17-րդ դարի ճանաչված պատմաբան, բանաստեղծ ու թարգմանիչ Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանը հաղորդում է, որ Կոնստանդնուպոլսում ապրում էին նաև հայ բոշաներ։ 1752-1764թթ., Նալյան պատրիարքի երկրորդ գահակալության ժամանակ, սրբազանը տեղի հայերին հորդորում է ամուսնություններ կնքել բոշաների հետ, որի հետևանքով վերջիններս ձուլվում-անհետանում են։

Օսմանյան կայսրության կառուցվածքը հիմնված էր «ազգերի» («միլլեթներ») համակարգի վրա, և դրանցից մեկն էր նաև հայ ազգը։ Երբ բողոքական ու կաթոլիկ միսիոներների ջանքերի շնորհիվ առաջացան նաև հայ բողոքական և հայ կաթոլիկ համայնքները, տեղի ունեցան ընդհարումներ հայ առաքելականների և բողոքականների ու կաթոլիկների միջև։ 18-րդ դարում կաթոլիկները դիմում հղեցին պետությանը որպես նոր համայնք ճանաչում ստանալու համար, բայց մերժվեցին։ Միայն 1830թ. ընդունվեցին որպես «հայկական կաթոլիկ ազգ»։ Հայ բողոքականներն էլ 1847թ. արժանացան ինքնուրույն «ազգ» կոչվելու իրավունքին։

Պատմության ընթացքում քաղաքը պատուհասող գլխավոր աղետներից են եղել հրդեհները (մինչև 20-րդ դարի առաջին կեսը քաղաքի տների գերակշիռ մասը փայտաշեն էր) և համաճարակները։ Եղել են դեպքեր, երբ հիմնովին հրո ճարակ են դարձել մի քանի թաղամաս, տուժել են բազմաթիվ մզկիթներ, եկեղեցիներ և անգամ կայսերական պալատը։ Չնայած քաղաքը թե՛ հունական և թե՛ օսմանյան ժամանակաշրջանում առողջապահական խիստ օրենքներ է մշակել, ժամանակ առ ժամանակ մոլեգնող համաճարակներից հնարավոր չի եղել խուսափել։ Այսպես, օրինակ, 1778թ. խոլերայի մեծ համաճարակի ժամանակ միայն Պալաթ թաղամասում մահացան 1000 հայեր։

Բյուզանդական շրջանում հայերի նկատմամբ դավանական խտրականությունը օսմանյան ժամանակաշրջանում շարունակվել է արդեն կրոնական տարբերության հողի վրա։ Որպես քրիստոնյաներ՝ հայերը մուսուլմանների համեմատ ստորադաս և իրավազուրկ էին։ Մինչև «Մեշրութիյեթ»ի, այսինքն՝ սահմանադրական միապետության հռչակումը 1908թ., որը հավասարություն էր պարգևում կայսրության բոլոր հպատակներին առանց կրոնական և ազգային խտրականության, ազգային ձեռնարկների իրավունքներն ու արտոնությունները՝ կապված, օրինակ, եկեղեցու, դպրոցի կամ որևէ մի այլ հիմնարկության ստեղծման հետ, կարելի էր ձեռք բերել միայն անձնական հարաբերությունների և ծառայությունների շնորհիվ։ Անգամ այնպիսի պարզ իրավունք, ինչպիսին գմբեթավոր եկեղեցու կամ եկեղեցու զանգակատան կառուցումն էր, հայերին արտոնվեց միայն 1863թ. ընդունված «Հայ ազգի կանոնադրության» շնորհիվ։ Այս կանոնադրությունը հնարավորություն տվեց նաև հայ համայնքին ազատ ղեկավարել իր եկեղեցիներն ու դպրոցները։ 1876թ. հայտարարված առաջին «Մեշրութիյեթ»ից հետո Կոնստանդնուպոլսից երկու հայ՝ Հովհաննես Էֆենդի Ալլահվերդին և Սեպուհ Բեյ Մակսուտյանն ընտրվում են խորհրդարանի պատգամավոր։

Հայերի կեղեքումները 19-րդ դարում անտանելի չափերի էին հասել, և 1890-ի հուլիսի 15-ին Հնչակյան կուսակցության կողմից կազմակերպվեց ցույց՝ 5 հազար հոգու մասնակցությամբ, Բաբբալիի թաղում, որտեղ գտնվում էր օսմանյան կառավարության շենքը։ Ցույցը դաժանորեն ճնշվեց և ավարտվեց արյունահեղությամբ։ 1896թ. օգոստոսի 14-ին դաշնակցականները գրավեցին Բանկ Օտտոմանի շենքը, ինչի հետևանքով Աբդուլ Համիդի կողմից քաղաքի

տարբեր վայրերում նախօրոք տեղավորված համիդյան գնդերը հարձակվեցին հայոց թաղերի վրա ու մեծ կոտորած իրականացրին խաղաղ բնակչության նկատմամբ։ Ջարդերն առավել մեծ չափերի հասան մասնավորապես Գումգափը, Սամաթիա և Խասգյուղ թաղամասերում։ Հազարավոր հայեր դարձան անասելի վայրագությունների զոհ։ Սամաթիայում հայերը ցույց տվեցին զինված դիմադրություն, և նրանց դեմ դուրս բերվեց կանոնավոր զորք, գործի դրվեցին անգամ թնդանոթները։ Այս դեպքերից հետո մեծ թվով հայեր արտագաղթեցին Ստամբուլից օտար երկրներ։

19-րդ դարի սկզբին 150 հազար հաշվվող Կոնստանդնուպոլսի հայ բնակչությունը 1840-ին հասել էր 222, իսկ 1880-ականներին՝ նույնիսկ 250 հազարի։

Հայերը, որոնք ազատ էին զինապարտությունից, փոխարենը մուծելով մեծ տուրք, առաջին անգամ զինվորական ծառայության կոչվեցին 1912-1913թթ.՝ Բալկանյան պատերազմի ժամանակ, քանի որ, ինչպես վերը նշեցինք, այլևս հավասարվեցին մուսուլմաններին ըստ նոր սահմանադրության։

1915թ. ապրիլի 24-ին, մի գիշերվա մեջ ձերբակալվեցին ու Փոքր Ասիայի կենտրոնական մասերը տարագրվեցին Կոնստանդնուպոլսի հայ համայնքի երևելի դեմքեր՝ բժիշկներ, երաժիշտներ, քաղաքական գործիչներ, հոգևորականներ և ունևորներ։ Ձերբակալությունները շարունակվեցին նաև հաջորդ օրերին, և աքսորվածների թիվն անցավ 700-ից։ Տարագրվածներից շատ քչերին հաջողվեց ողջ մնալ։

1923թ. հռչակվեց Թուրքիայի հանրապետությունը։ Երկրում ընդունվեցին օրենքներ՝ կազմված եվրոպական օրինակով։ Սխալ կլինի ասել, թե այս ամենի հետևանքով բարելավվեց հայ համայնքի վիճակը։ Օսմանյան տարիներին գոյություն ունեցող օրենքով սահմանված անհավասարությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև Թուրքիայի հանրապետության օրոք շարունակվեց արդեն չգրված օրենքով։ Զավեշտական է, որ օսմանյան անհավասարության պայմաններում երկրի ամենաբարձր պաշտոններին հասած հայերն այսօրվա «հավասարության» պայմաններում չեն կարողանում դառնալ թեկուզ ամենահասարակ պետական պաշտոնյա։

Օսմանյան կայսրությունը, լինելով ոչ ազգային պետություն, դեմ էր բոլոր տեսակի ազգային հոսանքներին։ Թուրքիայի հանրապետության ղեկավարությունը, լինելով իթթիհաթական գաղափարախոսության ժառանգորդ, որդեգրեց օսմանյան բազմազգ հավաքականությունը մի ազգի մեջ ձուլելու քաղաքականությունը։ Աթաթուրքի «ռեֆորմների» մեծ մասն ուղղված էր ոչ այնքան «ժամանակակից քաղաքակրթության աստիճանին հասնելու», ինչպես հավաստիացնում են հանրությանը, որքան ժողովրդի մեջ գոյություն ունեցող տարբերությունները վերացնելու նպատակին։

Հանրապետության հռչակումից անմիջապես հետո ձեռնարկվեց «Հայրենակից, թուրքերեն խոսիր» կամպանիան։ Մինչ այդ ամեն մեկը խոսում էր իր լեզվով, քանզի թուրք ժողովուրդ ասվածը բազմաթիվ ազգությունների մի կոնգլոմերատ է, սակայն երկրում այնպիսի վախի մթնոլորտ ստեղծվեց, որ թուրքերենից բացի ուրիշ լեզվով խոսելը վերացավ անգամ ընտանիքի մեջ։

1941թ. մայիսին ընդունված որոշմամբ 20-40 տարեկան բոլոր ոչ մուսուլման (այսինքն՝ հույն, հայ ու հրեա) տղամարդիկ զինվորական ծառայության կոչվեցին առանց որևէ նախնական զգուշացման։ Այս «զինվորները» կենտրոնացվեցին հատուկ ճամբարներում, նրանց տրամադրեցին ոչ թե թուրքական կանոնավոր բանակի, այլ աղբահավաքի համազգեստ, իսկ զենքի փոխարեն՝ բահ։ 14 ամիս տևող «ծառայության» ընթացքում նրանք կատարեցին ճանապարհաշինարարական աշխատանքներ։ Տարատեսակ վարկածներ կան այս «զինվորագրության» իսկական պատճառների և նպատակների վերաբերյալ, սակայն մինչ օրս բուն նպատակը չի բացահայտված։

«Զինվորների» վերադարձից 3,5 ամիս անց նոր արհավիրք եկավ քրիստոնյաների գլխին՝ 1942-ի նոյեմբերին կառավարությունն ընդունեց «Ունևորության տուրքի մասին» օրենքը։ Տուրքի կամայականորեն որոշված չափաբաժինը որպես օրենք գերազանցում էր մարդկանց ամբողջ ունեցվածքի նյութական արժեքը, որտեղից պարզ երևում էր, որ գլխավոր նպատակը սնանկացումն էր։ Տուրքը նախատեսված էր, իհարկե, ոչ մուսուլմանների համար։

Անցան 13 համեմատաբար խաղաղ տարիներ, որոնց ընթացքում հայերն ու մյուս կրոնական փոքրամասնությունները տքնաջան աշխատանքի շնորհիվ վերականգնեցին իրենց տնտեսական դիրքը, և ահա 1955-ի սեպտեմբերի 6-ին՝ Կիպրոսի խնդիրը պատրվակելով ու հույներին ահաբեկելու նպատակով, պետության կողմից իրագործվեց կազմակերպված հարձակում Ստամբուլի հայկական և հունական խանութների, տների, եկեղեցիների և գերեզմանների վրա։ Երբ հսկողությունից դուրս եկած ամբոխին հանգստացնելու համար վրա հասան զինվորական միավորումները՝ հրասայլերի օգնությամբ, քաղաքը այնպիսի մի տեսարան էր ներկայացնում, ասես պատերազմական դաշտ լիներ։

Այս դեպքից հետո Ստամբուլի բազմաթիվ հայեր և հույներ լքեցին տուն ու տեղ և գաղթեցին արտասահմանյան երկրներ։ Արտագաղթի ալիքը շարունակվեց մինչև 80-ական թվականները։ Նույն տարիներին, այսինքն՝ 50-ականներից մինչև 80-ականները, դժվարացավ նաև Թուրքիայի տարբեր տարածքներում հատ ու կենտ մնացած հայերի վիճակը։ Այդ ժամանակ գավառներից շատ հայկական ընտանիքներ, թողնելով տունն ու հողը, ներգաղթեցին Ստամբուլ, այստեղից էլ հայերի մեծ մասն արտագաղթեց Ամերիկա, Եվրոպա և անգամ Ավստրալիա։ Այդ շրջանում երկիրը լքեցին ավելի քան 100 հազար հայեր։

Այսօր պոլսահայությունը հաշվվում է ընդամենը 50 հազար հոգի, որոնք իրենց ուսերին են պահում նախկին 200 հազարանոց համայնքի ժառանգությունը։

Տիրան Լոքմագյոզյան[1]

[1] Պոլսահայ մտավորական և լրագրող Տիրան Լոքմագյոզյանի հոդվածաշարը, որը շարունակաբար տպագրվելու է «Գլոբուս» տեղեկագրում, նվիրված է Ստամբուլի հայ համայնքի պատմությանը, ներկային, խնդիրներին, որոնց շարքում քննության կենթարկվեն մասնավորապես դպրոցները, եկեղեցին, սոցիալական վիճակը և այլն։ Այն, որ հեղինակը ծնվել և երկար տարիներ ապրել է Ստամբուլում, թույլ է տալիս ավելի բազմակողմանի և, որ ամենակարևորն է, ներսից պատկերել պոլսահայ համայնքի կյանքը և առկա խնդիրները (խմբ.)։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ

(ըստ թուրքական պաշտոնական տվյալների)

Օրերս թուրքական մամուլում տարածվեց մի զեկույց, որում ներկայացվում էին Թուրքիայում բնակվող էթնիկ խմբերի հետազոտության արդյունքները: Այն կատարվել է 2000թ., Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հրահանգով և պատվերով, իրականացրել է թուրքական երեք համալսարանների՝ Էրջիյես, Էլյազիգի Եփրատ և Մալաթիայի Ինոնյու, դասախոսներից կազմված մասնագիտական հանձնաժողովը՝ դոկտոր, պրոֆեսոր Շաբան Քուզգունի ղեկավարությամբ: Ծրագրի շրջանակներում մեկ առ մեկ ուսումնասիրվել են Թուրքիայի նահանգները (թվով 68), գավառները, գյուղերը, թաղամասերը, փողոցները: Աշխատանքի ընթացքում ճշտվել են, թե հարցված մարդիկ ինչ էթնիկ պատկանելություն ունեն, ինչ կրոնա-դավանական խմբի են պատկանում, ինչ աղանդի են հարում և այլն: Ուշագրավ է, որ հանձնաժողովի նախագահ՝ դոկտոր, պրոֆեսոր Շաբան Քուզգունը, 2000թ. մայիսի 14-ին Կեսարիա-Մալաթիա ավտոճանապարհին տեղի ունեցած ավտովթարի հետևանքով մահացել է, և հանձնաժողովի մյուս անդամները, Քուզգունի մահը համարելով առեղծվածային, որոշել են դադարեցնել իրենց անդամակցությունը հանձնաժողովին: Պետք է նշել, որ հետազոտությունը, բնականաբար, կրել է գաղտնի բնույթ, և այնուամենայնիվ, սպրդած մի քանի տեղեկություններ տարբեր մեկնաբանությունների և քննադատության տեղիք էին տվել:

Թուրքիայի էթնիկ պատկերի վերաբերյալ այդ փակ զեկույցում տեղ գտած տվյալների գաղտնազերծման պատճառ է նշվում անցյալ տարի Մալաթիայում դաժանաբար սպանված երեք միսիոներների գործով շարունակվող դատական գործընթացը, և հենց քննության շրջանակներում էլ այդ տվյալները կցվել են դատական գործի նյութերին:

Ստորև մեջբերում ենք 2000թ. դրությամբ Թուրքիայի էթնիկ խմբերի վերաբերյալ տվյալները, որոնք տեղ են գտել զեկույցում.

Թուրքեր- *շուրջ 50 միլիոն, այս խմբի մեջ են մտնում նաև թյուրքական մի շարք ժողովուրդներ, որոնք բնակվում են Թուրքիայի Հանրապետությունում՝ թուրքմենները, յուրյուքները, թաթարները, թահթաջիները, քարաչայցիները, ազերիները: Ըստ զեկույցի՝ այս նույն խմբում կարելի է ընդգրկել նաև շուրջ 5 միլիոն մարդկանց, որոնք գտնվում են թուրքացման գործընթացում:*

Քրդեր- *նրանց թիվը, ըստ զեկույցի, 12 600 000 է, և այս թվի մեջ ներառված են նաև շուրջ 3 միլիոն զազաներ: Սակայն նշվում է, որ քրդերի խմբից մոտ 2.5 միլիոնը գտնվում է թուրքացման գործընթացի մեջ, որոշ տեղերում նույնիսկ կան մարդիկ, որոնք չեն ընդունում, որ իրենք քուրդ են:*

Վրացիներ- *հիմնականում բնակվում են Օրդուում, Արդվինում, Սամսունում և Մարմարայի շրջանում, կազմում են շուրջ 1 միլիոն: Բացի Սև ծովի առափնյա մի քանի նահանգներում բնակվողներից, մնացածը մոռացել են վրացերենը, սակայն վերջին տարիներին Վրաստանի անկախացումից հետո նրանց շրջանում նկատվում է հետաքրքրության աճ վրացականության նկատմամբ:*

Բոսնիացիներ- *բնակվում են Ադափազարի, Իզմիրի, Մանիսայի շրջաններում, և նրանց թվաքանակը շուրջ 2 միլիոն է:*

Չերքեզներ- *Բնակվում են տարբեր քաղաքներում, թվաքանակը շուրջ 2.5 միլիոն է, նրանց 80 տոկոսը մոռացել է չերքեզերենը:*

Արաբներ- *Բնակվում են հիմնականում Սղերթում, Շրնաքում, Մարդինում, Դիարբեքիրում, Շանլըուրֆայում, Հաթայում, Ադանայում և Ստամբուլում, նրանց թիվը 870 հազար է։*

Ալբանացիներ- *Թուրքիայում շուրջ 1 300 000 են, սակայն նրանց կեսից ավելին թուրքացման գործընթացի հետևանքով հեռացել է իր արմատներից, և միայն 500 հազար ալբանացիներ են պահպանել էթնիկ ինքնագիտակցությունը։*

Լազեր- *Լազերի իրական թիվը 80 հազար է, սակայն այն սխալ մոտեցմամբ, ըստ որի՝ ամբողջ Սև ծովի արևելյան շրջանի բնակիչներին համարում են լազ, նրանց թիվը մեծ է ներկայացվում։ Լազերեն խոսող իսկական լազերը բնակվում են Ռիզեի և Արդվինի մի քանի գյուղերում ու Մարմարայի շրջանի մի քանի քաղաքներում։*

Հեմշիններ *(համշենցիներ)*- *Լազերի նման բնակվում են Ռիզեի և Արդվինի մի քանի գավառներում, և նրանց թիվը շուրջ 13 հազար է։*

Պոմակներ- *ոմանց կարծիքով՝ թյուրքական, ոմանց կարծիքով էլ՝ սլավոնական ծագում ունեցող պոմակները շուրջ 600 հազար են և ամբողջովին թուրքացել են։*

Գնչուներ- *700 հազար*

Հայեր- *60 հազար*

Հրեաներ- *20 հազար*

Հույներ- *15 հազար։*
Թուրքիայում բնակվում են նաև շատ քիչ թվով ասորիներ։

Զեկույցում նշվում է, որ Թուրքիայում 2000թ. եղել են շուրջ 10 միլիոն ալևիներ։ Մասնագետները կարծում են, որ ներկայումս նրանց թիվը հասած պետք է լինի 11 միլիոնի։ Այստեղից հետևություն է արվում նաև, որ Թուրքիայի բնակչության 85 տոկոսը սուննի է։ Հատուկ նշվում է, որ քրդերի, բոսնիացիներ, չերքեզների, ալբանացիների և արաբների շրջանում նկատվում է թուրքացման ինտենսիվ գործընթաց։

Ավելորդ չէ նշել, որ զեկույցում տեղ գտած թվերը տարբեր կարծիքների տեղիք են տվել։ Կարելի է ասել՝ որոշ դեպքերում դրանք այնքան էլ հավատ չեն ներշնչում։ Օրինակ, քուրդ մտավորական Ումիթ Ֆըրաթը նշում է, որ ի տարբերություն զեկույցում նշված 12 600 000 թվի՝ իրականում քրդերը Թուրքիայում 16-18 միլիոն են։ Ըստ նրա՝ հետազոտության նպատակն իրականում եղել այն, թե ինչպես կարելի է էթնիկական տարբեր խմբերի պատկանողներին ձուլել, արմատներից հեռացնել։ Ֆըրաթն ավելացրել է, որ 80 տարի թուրքական պետությունը շարունակ այսպիսի գաղտնի հետազոտություններ է կատարում և զեկույցներ պատրաստում։

Մեր կարծիքով՝ չի բացառվում, որ զեկույցի՝ լրատվամիջոցներում «գաղտնազերծված» տարբերակում հանդիպող թվերը շրջանառության մեջ են դրվել որոշակի քաղաքական նպատակներով։ Իրոք, հիշյալ զեկույցում տեղ գտած մի շարք թվեր լուրջ կասկածի տեղիք են տալիս։ Այսպես, ամենահոռետեսական գնահատականներով Թուրքիայում համշենցիները հաշվվում են 50-60 հազար, մինչդեռ զեկույցում նշվում է 13 հազարը, որը հեռու է իրականությունից։ Մյուս հանգամանքը, որը մեզ թույլ է տալիս կասկածի տակ առնել «սպրդած» տարբերակի անաչառությունը, հետևյալն է. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հրամանով և պատվերով ձևավորված հանձնաժողովում տեղ գտած մասնագետներից է նաև Մալաթիայի Իսոնյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ Սալիմ Ջյոհջեն, որը հայտնի է ծպտյալ և իսլամացված հայերի վերաբերյալ ուսումնասիրություններով։ Տարբեր աղբյուրներում նշվում է, որ Սալիմ Ջյոհջեն ծպտյալ հայերի մասին տվյալներ է հավաքել հենց

այս հանձնաժողովում աշխատելու ժամանակ: Նա ինքն էլ վկայել է, որ ***«դաշտային աշխատանքների ընթացքում միայն Մալաթիայում արձանագրել է շուրջ 3500 ծպտյալ հայերի, որոնք ներկայանում են որպես թուրքեր և քրդեր»***: Հայտնի է նաև, որ Սալիմ Ջյոհջեն մի շարք սկանդալային հայտարարություններ է արել ծպտյալ և իսլամացված հայերի վերաբերյալ: Սակայն զեկույցում ընդհանրապես չի խոսվում ծպտյալ հայերի և նրանց շրջանում ընթացող գործընթացների մասին, մինչդեռ շեշտվում է, որ այլ էթնիկ խմբեր գտնվում են թուրքացման տարբեր փուլերում: Շատերի կարծիքով՝ զեկույցը պատրաստողները ճիշտ չեն ներկայացրել նաև ալևիների թիվը՝ այստեղ ևս հետապնդելով քաղաքական նպատակներ:

Այս և այլ փաստեր հիմք են տալիս ենթադրել, որ օրերս թուրքական մամուլում «գաղտնազերծվել» և բազմաթիվ լրատվական գործակալություններով շրջանառության մեջ են դրվել զեկույցի «մշակված», այլ ոչ թե իրական տվյալները:

Թուրքիայի Հանրապետության բնակչությունը

Ավելի վաղ Թուրքիայի վիճակագրական ընկերությունը հրապարակել էր երկրի բնակչության պաշտոնական թվաքանակը, ինչպես նաև նրանց տեղաբաշխումն ըստ նահանգների: Ուշագրավ է, որ առաջին անգամ Թուրքիայում կիրառվել է մարդահամարի նոր մեթոդ, որի համար որպես հիմք են ծառայում հասցեները, որտեղ պաշտոնապես գրանցված են մարդիկ:

Թուրքիայի Հանրապետությունում առաջին պաշտոնական մարդահամարը տեղի է ունեցել 1927թ., դրանից հետո անցկացվել են 14 ընդհանուր մարդահամարներ, որոնցից վերջինը՝ 2000թ.: Այս մարդահամարներում կիրառվել է, այսպես կոչված, «դե ֆակտո» սկզբունքը, այսինքն՝ մարդիկ գրանցվել են ըստ իրենց գտնվելու վայրի: 2006թ. ընդունված «Բնակչության ծառայությունների» թիվ 5490 օրենքով Թուրքիայում սկսեց կիրառվել մարդահամարի նոր մեթոդ՝ «դե յուրե» կամ էլ բնակչության հաշվարկում՝ ըստ գրանցված հասցեների: Սահմանված կարգի համաձայն՝ այսուհետ Թուրքիայի վիճակագրական ընկերությունն ամեն տարի պետք է հրապարակի այդ մեթոդով ձեռք բերած տվյալները:

Ըստ վիճակագրական ընկերության՝ պաշտոնապես Թուրքիայի Հանրապետության բնակչությունը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 70 միլիոն 586 հազար 256 մարդ է, որից 35 միլիոն 37 հազար 533-ը տղամարդիկ են, 35 միլիոն 209 հազար 723-ը՝ կանայք: Բնակչության գերակշիռ մասը՝ 70.5 տոկոսը, բնակվում է քաղաքներում (այդ թվում նահանգային ու գավառային կենտրոններում), 29.5 տոկոսը՝ գյուղերում: Հետաքրքիր է, որ Թուրքիայի բնակչության մեծ մասն ավանդաբար եղել է գյուղաբնակ, իսկ պետությունը համարվել է գյուղատնտեսական: Սակայն ուրբանացման գործընթացների արդյունքում ներկայումս պատկերը ամբողջովին փոխվել է, ինչը վկայում են նաև պաշտոնական վիճակագրական տվյալները: Ներկայումս 49 միլիոն 747 հազար 859 մարդ բնակվում են քաղաքներում, իսկ 20 միլիոն 838 հազար 397-ը՝ գյուղերում: Ընդ որում՝ ամենամեծ քաղաքային բնակչություն ունեցող նահանգն Անկարան է, որտեղ բնակչության 92.7 տոկոսը բնակվում է քաղաքներում, իսկ ամենաքիչ քաղաքային բնակչություն ունեցող նահանգը (31.8 տոկոս) Արդահանն է:

Ամենամեծ քաղաքը, բնականաբար, Ստամբուլն է, որի բնակչությունը 12 միլիոն 573 հազար 836 մարդ է կամ Թուրքիայի ընդհանուր բնակչության 17.8 տոկոսը: Ստացվում է, որ Թուրքիայում մոտավորապես ամեն հինգ մարդուց մեկը բնակվում է Ստամբուլում: Ըստ բնակչության թվաքանակի Ստամբուլին հաջորդում են մայրաքաղաք Անկարան՝ Թուրքիայի ընդհանուր բնակչության 6.3 տոկոսը, Իզմիրը՝ 5.3 տոկոս, Բուրսան՝ 3.5 տոկոս և Ադանան՝ 2.8 տոկոս: Ամենաքիչ բնակչություն ունեցող հինգ նահանգներն են Բայբուրթը, Թունջելին, Արդահանը, Քիլիսը և Գյումուշհանեն:

Հրապարակվել են նաև Թուրքիայի բնակչության տվյալներն ըստ տարիքային հատկանիշի: Պարզվում է, որ Թուրքիայի բնակչության միջին տարիքը 28.3 է. տղամարդկանց միջինը՝ 27.7, կանանցը՝ 28.8, քաղաքաբնակների միջին տարիքը՝ 28.4, գյուղաբնակներինը՝ 27.9: Հետաքրքիր է նաև, որ աշխատունակների խումբը, այսինքն՝ 15-64 տարեկանները, Թուրքիայի բնակչության 66.5 տոկոսն են: Բնակչության 26.4 տոկոսը 0-14 տարեկաններն են, 7.1 տոկոսը՝ 65 և ավելի տարիք ունեցողներն են:

Պետք է նշել նաև, որ ըստ վիճակագրության ընկերության ներկայացրած նոր տվյալների՝ հաջորդ ընտրություններում փոփոխվելու է նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ներկայացված պատգամավորների թիվը: Այն շրջաններն ու քաղաքները, որտեղ աճել է բնակչությունը, բնականաբար, կավելանա նաև պատգամավորների թիվը: Ներկայումս, օրինակ, Ստամբուլում 105 հազար ընտրողին հասնում է մեկ պատգամավոր, իսկ Անկարայում 100 հազարին՝ մեկը: Հաջորդ ընտրություններին Ստամբուլից ներկայացված պատգամավորների թիվը ներկայիս 70-ի փոխարեն լինելու է 83, քանի որ բնակչությունն աճել է մոտ 2.5 միլիոնով: Էրզրումի, Տրապիզոնի, Մալաթիայի, Քոնիայի, Սեբաստիայի պատգամավորների թիվը կրճատվելու է:

Ներկայացված պաշտոնական տեղեկության մեջ քիչ են տվյալները Թուրքիայից արտերկիր արտագաղթածների մասին, սակայն նշվում է, որ ընդհանուր մարդահամարի ընթացքում չեն հաշվարկվել և չեն ներառվել արտասահմանում ապրող շուրջ 3.7 միլիոն թուրքերը: Նրանք հիմնականում բնակվում են Եվրոպայի տարբեր երկրներում (Գերմանիա, Բելգիա, Հոլանդիա), որտեղ ձևավորել են հոծ համայնքներ՝ իրենց բազմաթիվ կառույցներով: Սակայն ոչ բոլորն են տվյալ երկրի քաղաքացիներ: Կարևոր է նշել նաև, որ թուրքական շատ կազմակերպություններ ու կառույցներ լուրջ աշխատանքներ են կատարում Եվրոպայի թուրքերին իրենց ազգային մշակույթին, մայրենի լեզվին հավատարիմ պահելու ուղղությամբ, ինչը տվել և տալիս է որոշակի արդյունքներ:

Ավելորդ չէ մեջբերել նաև նույն վիճակագրական ընկերության ավելի վաղ հրապարակած տվյալները Թուրքիայում աղքատության 2006թ. ցուցանիշների մասին: Ըստ պաշտոնական տվյալների՝ Թուրքիայի բնակչության 17.81 տոկոսը կամ 12 միլիոն 930 հազարը աղքատ են, 539 հազարը կամ 0.74 տոկոսը՝ քաղցած:

Ուշագրավ և, միևնույն ժամանակ, խոսուն է Համաշխարհային բանկի զեկույցը Թուրքիայի վերաբերյալ, որտեղ ասվում է, որ երիտասարդության, այսինքն՝ 15-24 տարեկանների 40 տոկոսը ոչ սովորում է, ոչ էլ աշխատում:

Ստորև ներկայացվում են Թուրքիայի վիճակագրական ընկերության հրապարակած տվյալներն ըստ բնակչության տեղաբաշխման և սեռային պատկանելության

Ըստ նահանգների և սեռի քաղաքային-գյուղական բնակչությունը և բնակչության խտությունը (31.12.2007թ. դրությամբ)

N	Նահանգ	Ընդամենը			Քաղաք			Գյուղ			Խտություն
		Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	
	Ընդամենը	**70 586 256**	**35 376 533**	**35 209 723**	**49 747 859**	**24 928 985**	**24 818 874**	**20 838 397**	**10 447 548**	**10 390 849**	**92**
1.	Ադանա	2 006 650	994 864	1 011 786	1 611 262	796 212	815 050	395 388	198 652	196 736	144
2.	Ադըյաման	582 762	288 615	294 147	329 060	163 256	165 804	253 702	125 359	128 343	83
3.	Աֆյոնքարահիսար	701 572	348 589	352 983	355 073	176 489	178 584	346 499	172 100	174 399	49
4.	Աղրը	530 879	275 243	255 636	282 361	147 850	134 511	248 518	127 393	121 125	46
5.	Ամասիա	328 674	165 957	162 717	201 331	102 538	98 793	127 343	63 419	63 924	58
6.	Անկարա	4 466 756	2 225 033	2 241 723	4 140 890	2 060 975	2 079 915	325 866	164 058	161 808	182
7.	Անթալիա	1 789 295	908 000	881 295	1 127 634	566 920	560 714	661 661	341 080	320 581	86
8.	Արդվին	168 092	84 025	84 067	91 860	45 927	45 933	76 232	38 098	38 134	23
9.	Այդընն	946 971	473 481	473 490	536 758	267 531	269 227	410 213	205 950	204 263	121
10.	Բալըքեսիր	1 118 313	559 546	558 767	649 423	325 108	324 315	468 890	234 438	234 452	78
11.	Բիլեջիք	203 777	108 299	95 478	145 126	78 405	66 721	58 651	29 894	28 757	47
12.	Բինգյոլ	251 552	128 144	123 408	141 703	73 680	68 023	109 849	54 464	55 385	30
13.	Բիթլիս	327 886	168 668	159 218	179 260	93 569	85 691	148 626	75 099	73 527	47
14.	Բոլու	270 417	134 502	135 915	157 938	79 388	78 550	112 479	55 114	57 365	33

N	Նահանգ	Ընդամենը			Քաղաք			Գյուղ			Խտություն
		Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	
15.	Բուրդուր	251 181	126 094	125 087	148 789	75 762	73 027	102 392	50 332	52 060	37
16.	Բուրսա	2 439 876	1 218 749	1 221 127	1 979 999	988 980	991 019	459 877	229 769	230 108	234
17.	Չանաք-քալե	476 128	244 613	231 515	247 443	129 026	118 417	228 685	115 587	113 098	48
18.	Չանքըրը	174 012	86 692	87 320	106 087	53 438	52 649	67 925	33 254	34 671	23
19.	Չորում	549 828	271 942	277 886	340 916	168 116	172 800	208 912	103 826	105 086	43
20.	Դենիզլի	907 325	453 756	453 569	460 747	230 169	230 578	446 578	223 587	222 991	78
21.	Դիարբեքիր	1 460 714	735 561	725 153	855 389	432 983	422 406	605 325	302 578	302 747	97
22.	Էդիրնե	396 462	203 569	192 893	259 809	134 325	125 484	136 653	69 244	67 409	65
23.	Էլյազիգ (Խարբերդ)	541 258	266 284	274 974	389 774	192 383	197 391	151 484	73 901	77 583	64
24.	Էրզինջան (Երզնկա)	213 538	110 282	103 256	114 437	59 620	54 817	99 101	50 662	48 439	18
25.	Էրզրում	784 941	393 589	391 352	485 563	244 354	241 209	299 378	149 235	150 143	31
26.	Էսքիշեհիր	724 849	359 393	365 456	625 453	309 750	315 703	99 396	49 643	49 753	52
27.	Գազիանթեփ	1 560 023	779 863	780 160	1 342 518	672 277	670 241	217 505	107 586	109 919	229
28.	Գիրեսուն	417 505	206 447	211 058	240 367	118 719	121 648	177 138	87 728	89 410	61
29.	Գյումուշհանե	130 825	65 261	65 564	60 781	30 554	30 227	70 044	34 707	35 337	20
30.	Հաքքարի	246 469	128 904	117 565	136 124	73 157	62 967	110 345	55 747	54 598	34
31.	Հաթայ	1 386 224	696 050	690 174	681 665	341 653	340 012	704 559	354 397	350 162	238
32.	Սպարտա	419 845	218 146	201 699	274 204	145 566	128 638	145 641	72 580	73 061	51
33.	Մերսին	1 595 938	801 112	794 826	1 056 331	530 884	525 447	539 607	270 228	269 379	103
34.	Ստամբուլ	12 573 836	6 291 763	6 282 073	11 174 257	5 579 998	5 594 259	1 399 579	711 765	687 814	2 420
35.	Իզմիր	3 739 353	1 872 579	1 866 774	3 175 133	1 585 005	1 590 128	564 220	287 574	276 646	311
36.	Կարս	312 205	161 787	150 418	134 726	71 411	63 315	177 479	90 376	87 103	31
37.	Կաստամոնու	360 366	176 954	183 412	184 685	91 365	93 320	175 681	85 589	90 092	27
38.	Կեսարիա	1 165 088	584 656	580 432	895 253	449 443	445 810	269 835	135 213	134 622	68
39.	Քըրքլարելի	333 256	171 204	162 052	212 390	109 551	102 839	120 866	61 653	59 213	53
40.	Քըրշեհիր	223 170	110 301	112 869	147 073	72 523	74 550	76 097	37 778	38 319	35
41.	Քոջաելի	1 437 926	728 590	709 336	894 242	452 420	441 822	543 684	276 170	267 514	398
42.	Քոնիա	1 959 082	968 666	990 416	1 412 343	701 737	710 606	546 739	266 929	279 810	50
43.	Քյութահիա	583 910	296 167	287 743	350 255	180 957	169 298	233 655	115 210	118 445	49
44.	Մալաթիա	722 065	357 998	364 067	462 569	228 738	233 831	259 496	129 260	130 236	61
45.	Մանիսա	1 319 920	667 061	652 859	841 059	426 689	414 370	478 861	240 372	238 489	101
46.	Քահրամանմարաշ	1 004 414	506 711	497 703	584 726	294 413	290 313	419 688	212 298	207 390	70
47.	Մարդին	745 778	373 067	372 711	428 611	215 184	213 427	317 167	157 883	159 284	85
48.	Մուղլա	766 156	392 403	373 753	310 527	158 585	151 942	455 629	233 818	221 811	60
49.	Մուշ	405 509	206 589	198 920	142 913	72 901	70 012	262 596	133 688	128 908	50
50.	Նևշեհիր	280 058	138 092	141 966	145 037	71 294	73 743	135 021	66 798	68 223	52
51.	Նիդդե	331 677	164 745	166 932	149 696	74 483	75 213	181 981	90 262	91 719	45
52.	Օրդու	715 409	356 553	358 856	395 283	195 810	199 473	320 126	160 743	159 383	120
53.	Ռիզե	316 252	155 580	160 672	197 167	97 122	100 045	119 085	58 458	60 627	81
54.	Սաքարիա	835 222	416 508	418 714	594 114	296 236	297 878	241 108	120 272	120 836	173
55.	Սամսուն	1 228 959	606 187	622 772	725 111	357 162	367 949	503 848	249 025	254 823	135

N	Նահանգ	Ընդամենը			Քաղաք			Գյուղ			Խտություն
		Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	
56.	Սիիրթ (Սղերթ)	291 528	150 628	140 900	173 770	90 999	82 771	117 758	59 629	58 129	53
57.	Սինոպ	198 412	97 032	101 380	99 872	48 671	51 201	98 540	48 361	50 179	34
58.	Սեբաստիա	638 464	320 557	317 907	415 961	209 248	206 713	222 503	111 309	111 194	22
59.	Թեքիրդաղ	728 396	375 703	352 693	494 342	254 587	239 755	234 054	121 116	112 938	115
60.	Թոքաթ	620 722	309 374	311 348	350 914	174 933	175 981	269 808	134 441	135 367	62
61.	Տրապիզոն	740 569	364 103	376 466	396 646	196 351	200 295	343 923	167 752	176 171	159
62.	Թունջելի	84 022	47 893	36 129	54 369	32 725	21 644	29 653	15 168	14 485	11
63.	Շանլըուրֆա	1 523 099	756 655	766 444	919 832	457 320	462 512	603 267	299 335	303 932	81
64.	Ուշաք	334 115	165 235	168 880	217 267	107 561	109 706	116 848	57 674	59 174	63
65.	Վան	979 671	500 068	479 603	511 678	261 824	249 854	467 993	238 244	229 749	51
66.	Յոզգաթ	492 127	244 674	247 453	265 531	132 473	133 058	226 596	112 201	114 395	35
67.	Զոնգուլ-դաք	615 890	302 827	313 063	274 275	135 937	138 338	341 615	166 890	174 725	186
68.	Աքսարայ	366 109	180 007	186 102	204 808	100 555	104 253	161 301	79 452	81 849	48
69.	Բայբուրթ	76 609	38 952	37 657	37 473	19 490	17 983	39 136	19 462	19 674	20
70.	Քարաման	226 049	111 771	114 278	147 210	72 679	74 531	78 839	39 092	39 747	26
71.	Քըրքքալե	280 234	139 923	140 311	230 189	114 769	115 420	50 045	25 154	24 891	62
72.	Բաթման	472 487	236 314	236 173	342 452	171 163	171 289	130 035	65 151	64 884	101
73.	Շըրնաք	416 001	217 068	198 933	256 352	134 493	121 859	159 649	82 575	77 074	58
74.	Բարթըն	182 131	88 784	93 347	58 788	28 798	29 990	123 343	59 986	63 357	88
75.	Արդահան	112 721	58 095	54 626	35 835	19 174	16 661	76 886	38 921	37 965	23
76.	Իգդիր	181 866	92 732	89 134	97 054	49 622	47 432	84 812	43 110	41 702	51
77.	Յալովա	181 758	90 246	91 512	122 075	60 032	62 043	59 683	30 214	29 469	215
78.	Քարաբյուք	218 463	109 429	109 034	164 072	82 867	81 205	54 391	26 562	27 829	53
79.	Քիլիս	118 457	58 489	59 968	82 419	40 754	41 665	36 038	17 735	18 303	83
80.	Օսմանիե	452 880	225 717	227 163	323 536	161 301	162 235	129 344	64 416	64 928	145
81.	Դյուզջե	323 328	160 823	162 505	157 894	78 068	79 826	165 434	82 755	82 679	126

Ռուբեն Մելքոնյան
«Նորավանք» հիմնադրամ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԵԲԿԱՅՔԵՐԸ ԱՄՆ-ՈՒՄ[1]

ԱՄՆ-ում հաստատված հայությունը Սփյուռքի ամենամեծ և ազդեցիկ համայնքներից մեկն է: Ներկայումս հայերի թիվը ԱՄՆ-ում տարբեր հաշվարկներով տատանվում է 1-1.2 մլն-ի սահմաններում: Այս ցուցանիշով ԱՄՆ հայ համայնքը զիջում է միայն Ռուսաստանի հայ համայնքին: Կազմակերպվածության առումով Ամերիկայի հայությունը Սփյուռքի համայնքների շրջանում նույնպես գտնվում է առաջին տեղերից մեկում: Աշխարհի թիվ 1 գերտերությունում հաստատված հայությունն իր ծանրակշիռ տեղն ունի սփյուռքահայ համայնքների շրջանում և կարևոր ռեսուրս է ինչպես Հայաստանի, այնպես էլ ողջ Հայության համար:

Ավանդաբար արտերկրի հայության համար համայնքային հաստատությունների (դպրոց, եկեղեցի և այլն) շարքում կարևոր տեղ են զբաղեցրել զանգվածային լրատվամիջոցները (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն): Համացանցային կայքերն այսօր, ի թիվս այլոց, ըստ էության նաև յուրահատուկ զանգվածային լրատվության միջոցներ են: Աշխարհասփյուռ Հայությունը, բնականաբար, օգտվում է համացանցի հնարավորություններից. ըստ տարբեր աղբյուրների՝ սփյուռքահայ վեբկայքերի թիվը հասնում է շուրջ 5 հազարի:

ԱՄՆ-ում բնակվող հայության վեբկայքերը մի կողմից արտացոլում են համայնքային կյանքը, մյուս կողմից՝ նպաստում համայնքի համախմբմանն ու ազգային ինքնության պահպանմանը: Սակայն արտերկրի մյուս հայկական համայնքների վեբկայքերի նման՝ ԱՄՆ հայ համայնքի վեբկայքերն առ այսօր չեն ենթարկվել լուրջ ուսումասիրության: Մինչդեռ այդ ուսումնասիրությունը կարևոր է հայ համայնքների ներքին կյանքին տեղյակ լինելու, նրանց առջև ծառացած մարտահրավերներին ծանոթանալու և տեղեկատվական դաշտում Հայության ռեսուրսների գույքագրումն ամբողջացնելու համար: Սույն հոդվածը, ըստ էության, փորձ է գույքագրելու համացանցում ԱՄՆ հայության համայնքային ռեսուրսները:

Համացանցում իրականացված որոնումների արդյունքում հայտնաբերվել է ԱՄՆ հայության 12 համայնքային վեբկայք: Այդ վեբկայքերը պատկանելության առումով կարելի է բաժանել երկու մասի: Առաջին խմբի մեջ այն վեբկայքերն են, որոնք որևէ հաստատության չեն պատկանում: Պարզապես ինքնին հանդիսանում են հայկական համայնքների վեբկայքեր: Այդպիսիք են Ատլանտայի հայության վեբկայքը (http://www.geocities.com/atlantaarmenians), Թեքսասի հայ համայնքի վեբկայքը (http://www.texahye.org), Կենտրոնական և Արևելյան Օհայոյի հայ համայնքի վեբկայքը (http://ohioarmenians.us/), Վաշինգտոնի հայ համայնքի վեբկայքը (http://kalantarian.org/Washac/index.htm), «Փոքր Հայաստան» անվանումը կրող Հոլիվուդի հայ համայնքի վեբկայքը (http://www.littlearmenia.com) և Ֆլորիդայի հայ համայնքի վեբկայքը (http://www.floridaarmenians.com):

Ինչպես երևում է, նշված վեբկայքերի մեջ որոշակի յուրահատկությամբ առանձնանում են Ատլանտայի հայության (http://www.geocities.com/atlantaarmenians) և Վաշինգտոնի հայ համայնքի (http://kalantarian.org/Washac/index.htm) վեբկայքերը: Բանն այն է, որ դրանք առանձին վեբկայքեր չեն, թեև բովանդակային առումով բնորոշվում են գրեթե լիակատար ինքնուրույնությամբ: Ատլանտայի հայության վեբկայքը գտնվում է http://geocities.yahoo.com վեբկայքի տիրույթում: Իսկ Վաշինգտոնի հայ համայնքի վեբկայքը Քալանթարյան ընտանիքի վեբկայքի (http://kalantarian.org) ենթակայքերից մեկն է:

Երկրորդ խումբը կազմում են այն վեբկայքերը, որոնք պատկանում են որևէ կազմակերպության: Այսպես, http://www.armnet.org վեբկայքը պատկանում է Ամերիկայի հայկական ցանց կազմակերպությանը: Բոսթոնի հայ համայնքի վեբկայքը Համազգային հայ կրթական և մշակութային միության Բոսթոնի մասնաճյուղի վեկայքն է (http://www.hamazkayin-

[1] Հոդվածում վերլուծության առարկա են հանդիսանում 12 հայկական համայնքային վեբկայքեր: Պարզ է, որ այդ թիվն ամբողջական չէ ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերի համար: Իրականում դրանց քանակն ավելի մեծ է, որոնց հայտնաբերումն ու ուսումնասիրությունը շարունակվում են:

boston.org): Կոլորադոյի հայ համայնքի վեբկայքը (http://www.armeniansofcolorado.org) պատկանում է տեղական Կոլորադոյի հայեր կազմակերպությանը: Մոնտեբելոյի հայ համայնքային վեբկայքը տեղի հայկական կազմակերպության՝ Մոնտեբելոյի հայկական կենտրոնի վեբկայքն է (http://www.armeniancenter.com): Հետաքրքիր վեբկայք ունի Լոս Անջելեսում գործող Պոլսահայ միություն կազմակերպությունը (http://www.oia.net/)[1]: Իսկ Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքի վեբկայքը պատկանում է Սան Ֆրանցիսկոյի հայկական ազգային կոմիտե կազմակերպությանը (http://www.ancsf.org/):

Ըստ ընդգրկման և գործունեության տարածական սահմանների՝ հայտնաբերված վեբկայքերը բաժանվում են երեք մասի՝ լոկալ, տարածաշրջանային և համապետական: Լոկալ վեբկայքերի տարածական սահմաններն ընդգրկում են միայն կոնկրետ բնակավայրեր՝ առանձին քաղաքներ, քաղաքների թաղամասեր և այլն: Հայտնաբերված վեբկայքերի ուղիղ կեսը՝ վեց վեբկայք, ունի լոկալ բնույթ: Դրանք են Ատլանտայի, Բոսթոնի, Մոնտեբելոյի, Սան Ֆրանցիսկոյի, Հոլիվուդի հայ համայնքների և Պոլսահայ միության վեբկայքերը:

Տարածաշրջանային են համարվում այն վեբկայքերը, որոնց գործունեության տարածական սահմաններն ընդգրկում են ԱՄՆ (իսկ ընդհանրապես՝ տվյալ պետության) այս կամ այն տարածաշրջանը: Հայտնաբերված վեբկայքերից հինգը տարածաշրջանային են: Դրանք են Կենտրոնական և Արևելյան Օհայոյի, Կոլորադոյի, Վաշինգտոնի, Թեքսասի և Ֆլորիդայի հայ համայնքների վեբկայքերը:

Եվ վերջապես, համապետական բնույթ է վերագրվում այն վեբկայքերին, որոնց գործունեությունը տարածվում է ամբողջ ԱՄՆ-ում: Հայտնաբերված վեբկայքերից միայն մեկը՝ Ամերիկայի հայկական ցանց կազմակերպության վեբկայքն ունի այդպիսի բնույթ:

Հաջորդ հարցը, որ կարևոր է թվում, վերաբերում է ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերի նպատակներին և թեմատիկ ուղղվածությանը, այսինքն՝ նրան, թե ինչպիսի թեմաներ են շոշափվում այդ վեբկայքերում: Այս տեսակետից հայտնաբերված վեբկայքերի գերակշիռ մեծամասնությունը՝ ութ վեբկայք, ունի համալիր բնույթ, ինչը նշանակում է, որ դրանց թեմատիկ ընդգրկվածությունը բազմազան է՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, կրթական, տեղեկատվական և այլն: Մյուս չորս վեբկայքերն ունեն տեղեկատվական բնույթ: Դրանք Կոլորադոյի, Մոնտեբելոյի, Թեքսասի հայ համայնքների և Պոլսահայ միության վեբկայքերն են:

Համալիր բնույթ կրող յոթ վեբկայքերից յուրաքանչյուրի պարագայում թեմատիկ ուղղությունների համադրությունը յուրահատուկ է (տե՛ս *Հավելված):* Սակայն այդ վեբկայքերից յոթի պարագայում՝ բացառությամբ Ամերիկայի հայկական ցանցի վեբկայքի, նպատակների և թեմատիկ ուղղությունների համադրության մեջ առկա է տեղեկատվական բաղադրիչը: Կրթական բաղադրիչն առկա է վեց վեբկայքերի պարագայում՝ բացառությամբ Ատլանտայի և Ֆլորիդայի հայ համայնքների վեբկայքերի: Մշակութային բաղադրիչն առկա է հինգ վեբկայքերում՝ բացառությամբ Կենտրոնական և Արևելյան Օհայոյի, Սան Ֆրանցիսկոյի և Ֆլորիդայի հայ համայնքների վեբկայքերի: Մյուս բաղադրիչները հանդիպում են ավելի հազվադեպ (տե՛ս *Հավելված):* Մասնավորապես, քաղաքական բաղադրիչն առկա է ընդամենը երկու՝ Սան Ֆրանցիսկոյի և Ֆլորիդայի հայ համայնքների վեբկայքերում:

Այսպիսով, ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերում նպատակների և թեմատիկ ուղղվածության տեսանկյունից հիմնականում գերակշռում են տեղեկատվական, կրթական և մշակութային ուղղությունները: Այդ վեբկայքերը հիմնականում զերծ են մնում ժամանակակից ԶԼՄ-ին խիստ բնորոշ քաղաքական թեմաների շոշափումից: Դրանք հիմնականում անդրադառնում են համայնքային կյանքին՝ անդրադառնալով մշակութային, կրթական, կրոնական և այլ թեմաների:

ԱՄՆ հայ համայնքային վեբկայքերի առնչությամբ հաջորդ կարևոր խնդիրը վերաբերում է դրանց և/կամ դրանք աշխատեցնող հաստատությունների հետ կապի միջոցներին: Հայտնաբերված վեբկայքերից միայն մեկը՝ Ֆլորիդայի հայ համայնքի վեբկայքը, որևէ տեղե-

[1] Պոլսահայ միությունը, ըստ էության, հայրենակցական կազմակերպություն է: Նրա վեբկայքի ընդգրկումն այս հոդվածի շրջանակներում պայմանավորված է նրանով, որ այնտեղ տեղեկություններ են պարունակվում նաև Լոս Անջելեսի հայ համայնքի կյանքի վերաբերյալ:

կություն չի տալիս կապի միջոցների մասին։ Մնացած տասնմեկի պարագայում այս կամ այն կերպ տեղեկություններ կապի միջոցների վերաբերյալ առկա են (տե՛ս *Հավելված)։* Այդ տասնմեկ վեբկայքերից ութի պարագայում հայտնի են վեբկայքերի համար պատասխանատու անձինք կամ այն հաստատությունների ղեկավար անձինք, որոնց պատկանում են տվյալ վեբկայքերը (տե՛ս *Հավելված)։* Մյուս երեքի՝ Մոնտեբելոյի, Թեքսասի և Հոլիվուդի հայ համայնքների վեբկայքերի պարագայում նման տեղեկություններ բացակայում են։

Վեբկայքերին կից ֆորումներն ընդհանուր շփման դաշտ ստեղծելու լավ հնարավորություն են տալիս, ինչը կարևոր է հայ համայնքների համախմբման և ազգային ինքնության պահպանման տեսանկյունից։ Ուստի, ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերը գույքագրելիս կարևոր է նաև պարզել այդ կայքերում ֆորումների առկայությունը։ Պարզվում է, որ ֆորումների առկայության տեսակետից ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերը լրջորեն «կաղում» են։ Հայտնաբերված կայքերի ջախջախիչ մեծամասնությունը՝ տասը վեբկայք, չունի կից ֆորումներ։ Կայքին կից Ֆորումներ ունեն միայն Կոլորադոյի և Հոլիվուդի հայկական համայնքների վեբկայքերը։

Վիճակը համեմատաբար ավելի բարվոք է վեբկայքերին բաժանորդագրվելու հնարավորության հարցում։ Վեբկայքերին բաժանորդագրվելու հնարավորությունը կարևորվում է դրանց նյութերից կանոնավոր օգտվելու տեսանկյունից։ Հայտնաբերված վեբկայքերի կեսը՝ վեց վեբկայք, տալիս են բաժանորդագրվելու հնարավորություն։ Դրանք են Ամերիկայի հայկական ցանցի, Պոլսահայ միության, Կենտրոնական և Արևելյան Օհայոյի, Սան Ֆրանցիսկոյի, Վաշինգտոնի և Հոլիվուդի հայ համայնքների վեբկայքերը։ Թեև կայքերին կից ֆորումների առկայության համեմատ բաժանորդագրության հնարավորության հարցում վիճակն ավելի բարվոք է, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս հարցում էլ ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերը լրջորեն կաղում են։ Դրանց ուղիղ կեսը՝ Ատլանտայի, Կոլորադոյի, Բոսթոնի, Մոնտեբելոյի, Թեքսասի և Ֆլորիդայի հայ համայնքների վեբկայքերը չեն ընձեռնում բաժանորդագրման հնարավորություն։

ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերի գույքագրման արդյունքներն ամփոփ ներկայացված են հավելվածում զետեղված աղյուսակում։

Վահրամ Հովյան
«Նորավանք» հիմնադրամ

Հավելված

ԱՂՅՈՒՍԱԿ
ԱՄՆ հայկական համայնքային վեբկայքերի տվյալների

Վեբկայքի հասցեն	Այն հաստատության անվանումը, որը գործարկում/ աշխատեցնում է տվյալ վեբկայքը	Վեբկայքի ընդգրկման և գրծն. տարածական սահմանները	Վեբկայքի նպատակները և թեմատիկ ընդգրկվածությունը	Վեբկայքը աշխատեցնող անձի/անձանց տվյալները և կապի միջոցները	Վեբկայքին կից ֆորումի առկայությունը կամ բացակայությունը	Վեբկայքին գրանցվելու ձևը
http://www.armnet.org/	Ամերիկայի հայկական ցանց	հմպ.	մշ., սոց., կրթ., գործ.	Կենտրոնական վարչություն նախագահ - Սթիվ Սեմերջյան փոխնախագահ - Էլիզաբեթ Աքյան քարտուղար - Արա Բալիկյան 49 East 21st Street, Apt. 4C New York, NY 10010 national@armnet.org	-	Էլ. փոստ
http://www.geocities.com/atlantaarmenians/	Ատլանտայի հայ համայնք	լկ.	տեղեկատվ., մշ.	Արմեն Ասատրյան Phone: (770) 939 - 6312 (home) E-mail: ararat@geocities.com	-	Բաժ. չունի
http://www.ohioarmenians.us/	Կենտրոնական և Հարավային Օհայոյի հայ համայնք	տրծ.	կրոն., տեղեկատվ., կրթ., գործ.	Համայնական խորհուրդ նախագահ - Մելքոն Հաջինազարյան փոխնախագահ - Արփի Ռոաչ Ս. Հակոբ եկեղեցի 3400 Calumet St. Columbus, OH 43214 վեբկայքի հետ կապը ուղղակի վեբկայքի միջոցով, ինչպես նաև webmaster@ohioarmenians.us	-	Անուն, էլ. փոստ
http://www.armeniansofcolorado.org	Կոլորադոյի հայեր	տրծ.	տեղեկատվ.	Կոլորադոյի հայեր կազմակերպության վարչություն նախագահ - Բետտի Օհաննեսյան փոխնախա-	+	Բաժ. չունի

Վեբկայքի հասցեն	Այն հաստատության անվանումը, որը գործարկում/ աշխատեցնում է տվյալ վեբկայքը	Վեբկայքի ընդգրկման և գրծն. տարածական սահմանները	Վեբկայքի նպատակները և թեմատիկ ընդգրկվածությունը	Վեբկայքը աշխատեցնող անձի/անձանց տվյալները և կապի միջոցները	Վեբկայքին կից ֆորումի առկայությունը կամ բացակայությունը	Վեբկայքին գրանցվելու ձևը
				գահ և քարտուղար - Վահե Քրիստիանյան գանձապահ - Դենիս Ջենտիլինի տնօրեններ - Արուս Քրիստիանյան, Զարմինե Շահվեքիլյան, Ֆիլիպ Գուզելյան, Մարալ Բերեղջիկլյան P.O. Box 13854 Denver, Colorado 80201 AOC tax id #L98-09585 president@armeniansofcolorado.org		
http://www.hamazkayin-boston.org http://plus.calendars.net/MENK	Համազգային հայ կրթական և մշակութային միություն - Բոսթոն	լկ.	տեղեկատվ., մշ., կրթ.	Արա Նազարյան, Թաթուլ Բաղալյան, Վարդան Կազանջյան, Մարտին Հարությունյան, Հարմիկ Ավեդյան 47 Nichols Avenue Watertown, MA 02472 Phone: 617.924.8849 email: info@hamazkayin-boston.org	-	Բաժ. չունի
http://www.armeniancenter.com	Մոնտեբելոյի հայկական կենտրոն	լկ.	տեղեկատվ.	420 W. Washington Blvd. Montebello, CA 90640 Tel: 323-722-9697 Fax: 323-722-1281 info@armeniancenter.com	-	Բաժ. չունի
http://www.oia.net/	Պոլսահայ միություն (Լոս Անջելես)	լկ.	տեղեկատվ.	տնօրենների խորհուրդ նախագահ - Սիմոն Աքիլաքոլու փոխնախագահ - Էդվին Մինասյան 19726 Sherman Way Winnetka, CA 91306 Tel: (818) 342-6378 Fax: (818) 342-9804	-	Անուն, էլ. փոստ

Վեբկայքի հասցեն	Այն հաստատության անվանումը, որը գործարկում/ աշխատեցնում է տվյալ վեբկայքը	Վեբկայքի ընդգրկման և գրծն. տարածական սահմանները	Վեբկայքի նպատակները և թեմատիկ ընդգրկվածությունը	Վեբկայքը աշխատեցնող անձի/անձանց տվյալները և կապի միջոցները	Վեբկայքին կից ֆորումի առկայությունը կամ բացակայությունը	Վեբկայքին գրանցվելու ձևը
http://www.ancsf.org/	Սան Ֆրանցիսկոյի հայկական ազգային կոմիտե	լկ.	քղք., տեղեկատվ., կրթ.	Գործադիր կոմիտե - Խաժակ Սարգսյան, Ռոքսաննա Մաքասջյան, Մարկ Մարգարյան, Ռաֆֆի Մոմջյան, Հայկ Բաղդասարյան, Անի Բաղդասարյան 51 Commonwealth Avenue, San Francisco, CA 94118 Tel: (415) 387-3433 Fax: (415) 751-0617 mail@ancsf.org	-	Անուն, ազգանուն, էլ. փոստ, հեռախոս, հասցե, մկնբ.ներ/ հարցեր
http://kalantarian.org/Washac/index.htm	Վաշինգտոնի հայ համայնք	տրծ.	տեղեկատվ., մշ., կրթ., կրոն., գործ., սպրտ.	washac@kalantarian.org Սուսան Մակարյան susan@kalantarian.org	-	Էլ. փոստ
http://www.texahye.org/	Թեքսասի հայ համայնք	տրծ.	տեղեկատվ.	Կապը Աուսթինի հայկական եկեղեցու էլ. փոստի միջոցով info@armenianchuchofaustin.com	-	Բաժ. չունի
http://www.littlearmenia.com/	Փոքր Հայաստան - Հոլիվուդի հայ համայնք	լկ.	տեղեկատվ., կրթ., մշ., գործ., ժմնց.	Համայնքային կենտրոն 1203 N Vermont Ave Los Angeles, CA 90029-1703 323-663-4148 կապը ուղղակի վեբկայքի միջոցով, ինչպես նաև webmaster@littlearmenia.com	+	Բաժ. համար անհրաժեշտ է ներկայացնել տվյալների մի մեծ համալիր
http://www.floridaarmenians.com/	Ֆլորիդայի հայ համայնք	տրծ.	տեղեկատվ., քղք., երիտ.	տվյալներ չկան	-	Բաժ. չունի

Աղյուսակում ընդգրկված համառոտագրությունների և պայմանական նշանների ցանկ

բաժ. - բաժանորդագրություն
գործ. - գործարար
երիտ. - երիտասարդական
ժմնց. – ժամանցային
լկ. – լոկալ
կրթ. – կրթական
կրոն. – կրոնական
հմպ. – համապետական
մկնբ. – մեկնաբանություն
մշ. – մշակութային
սոց. – սոցիալական
սպրտ. – սպորտային
տեղեկատվ. – տեղեկատվական
տրծ. – տարածաշրջան, տարածաշրջանային
քղք. – քաղաքական
+ – առկա է
- – առկա չէ

КАЧЕСТВО ГОСУПРАВЛЕНИЯ

Всемирный Банк*World Bank* опубликовал традиционный рейтинг, в рамках которого оценивается качество государственного управления в странах мира.

В докладе «Показатели Эффективности Государственного Управления в Странах Мира»*Worldwide Governance* Indicators указывается, что правительства многих развивающихся стран достигли существенных успехов в борьбе с коррупцией, а некоторые из них уже не уступают развитым странам по сводным показателям эффективности государственного управления. Примеры надлежащего управления отмечаются в странах с самым разным уровнем дохода, и несколько стран с формирующейся рыночной экономикой не уступают развитым странам по основным показателям качества государственного управления.

В рамках исследования осуществляется оценка качества государственного управления по шести основным параметрам:

1. **Учет мнения населения и подотчетность государственных органов** (в какой степени граждане страны имеют возможность участвовать в выборе правительства, уровень свободы слова, свободы объединений и пр.),
2. **Политическая стабильность и отсутствие насилия** (степень вероятности дестабилизации правительства неконституционными методами или с применением насилия),
3. **Эффективность работы правительства** (оценка качества государственных услуг, качества работы госслужащих, степень их независимости от политического давления и т.д.),
4. **Качество нормативно-правового регулирования** (оценка способности правительства вырабатывать обоснованную политику и нормативные правовые акты, которые способствуют развитию частного сектора),
5. **Верховенство закона** (оценка степени доверия различных субъектов к действующим в обществе нормам и их готовности соблюдать эти нормы, в том числе оценка эффективности принудительного исполнения договоров, защиты прав собственности, работы полиции и судебных органов, уровня преступности и распространения насилия),
6. **Борьба с коррупцией** (оценка распространенности практики использования государственной власти в корыстных целях).

В целом, за десятилетие качество госуправления в мире практически не повысилось. Есть лишь отдельные исключения из этого правила. Например, отмечается существенное улучшение показателей учета мнения населения и подотчетности государственных органов в Украине и успешная борьба с коррупцией в Грузии. В свою очередь, Беларусь отнесена к группе государств, где качество государственного управления ухудшилось. По данным доклада, полтора десятка стран с формирующейся рыночной экономикой, в том числе Эстония, Латвия и Литва, опережают по основным показателям качества государственного управления такие индустриально развитые страны, как Греция и Италия.

Оценка страны производилась на основе процентных показателей. Каждое государство по каждому из шести критериев получало свой рейтинг. К примеру, рейтинг 70% означает, что качество госуправления в данном государстве лучше, чем в 70% государств мира, но хуже, чем в 30%.

Для упрощения изложения мы используем систему оценки по семибальной шкале, где 1 - высшая оценка (это означает, что рейтинг государства в данной категории составляет 90-100%), 7 - низшая (0%, государство является абсолютно худшим в данной категории). «Двойка» означает рейтинг 75-90%, «тройка» - 50-75%, «четверка - 25-50%, «пятерка» - 10-25%, «шестерка» - 0-10%.

Наивысшие оценки по всем показателям (то есть, государство получило высшую оценку «единицу» во всех категориях) получили Австрия, Новая Зеландия, Норвегия, Швеция и Швейцария. Безусловным аутсайдером (рейтинг по всем шести критериям близок к 0%) признано Сомали.

Рейтинг постсоветских государств выглядит следующим образом:

Россия. «Четверки» за «Эффективность работы правительства» и «Качество нормативно-правового регулирования», в остальных четырех категориях - «шестерки». По сравнению с прошлым рейтингом, отмечено некоторое улучшение.

Беларусь. «Шестерка» поставлена за «Борьбу с коррупцией» и «Верховенство закона», «тройка» - за «Политическую стабильность». Остальные три критерия получили низший 7-й балл. По сравнению с прошлым годом, ситуация ухудшилась.

Украина. Все «четверки», за исключением «тройки» за «Политическую стабильность». Ситуация заметно улучшилась.

Молдова. «Пятерка» за «Эффективность работы правительства», остальные «четверки». Ситуация заметно улучшилась.

Армения: «Четверки» по пяти категориям, «тройка» - за «Качество нормативно-правового регулирования». Ситуация несколько ухудшилась.

Азербайджан: «Шестерки» по четырем категориям, «четверки» - по двум («Эффективность работы правительства» и «Качество нормативно-правового регулирования»). Без изменений, по сравнению с предыдущим рейтингом.

Грузия. «Шестерка» за «Политическую стабильность», «тройки» - за «Эффективность работы правительства» и «Качество нормативно-правового регулирования», остальные категории получили «четверку». Ситуация улучшилась.

Казахстан. «Шестерки» получили «Учет мнения населения», «Верховенство закона» и «Борьба с коррупцией», тройку - «Политическая стабильность», остальные - «четверки». Ситуация изменилась к худшему.

Кыргызстан. «Семерки» (абсолютно низшая оценка) за »Верховенство закона» и «Борьбу с коррупцией», «шестерку» получили «Политическая стабильность» и «Эффективность работы правительства», остальные - «четверки». Картина смешанная: по одним показателям отмечен прогресс, по другим - регресс.

Таджикистан. Все «шестерки». Без изменений.

Туркменистан. Все «семерки», «Политическая стабильность» получила «четверку». Без изменений.

Узбекистан. «Семерки» (низший балл) за «Учет мнения населения и подотчетность государственных органов» и «Качество нормативно-правового регулирования», «четверка» - за «Эффективность работы правительства», остальные - «шестерки». По одним показателям ситуация улучшилась, по другим - ухудшилась.

Латвия. «Двойка» за «Качество нормативно-правового регулирования», остальные - «тройки». Без изменений.

Литва. «Тройки» за «Верховенство закона» и «Борьбу с коррупцией», остальные «двойки». Без изменений.

Эстония. Высший балл («единица») за «Качество нормативно-правового регулирования», «тройка» - за «Политическую стабильность». Остальные четыре показателя получили «двойку». Без изменений.

Для сравнения, США получили «тройку» за «Политическую стабильность», «двойку» за «Учет мнения населения», остальные категории получили высший балл («единицу»). За год ситуация изменилась к лучшему.

Совершенствование системы государственного управления способствует успеху в борьбе с бедностью и повышению уровня жизни населения. При улучшении качества государственного

управления на одно среднеквадратическое отклонение в долгосрочном плане детская смертность снижается на две трети, а доходы увеличиваются примерно в три раза.

Подобное улучшение качества государственного управления вполне реально, поскольку оно представляет собой лишь малую долю различия между странами с наилучшими и наихудшими показателями. Например, по показателю обеспечения верховенства закона всего лишь одно среднеквадратическое отклонение отделяет страны с наихудшими показателями - Сомали и Афганистан - от таких стран, как Кения и Боливия, Кению и Боливию - от Ганы и Египта, а эти две страны, в свою очередь, от Португалии и Эстонии, а Португалию и Эстонию - от лидеров рейтинга, таких как Дания и Швейцария.